

Ս. Մ. ՅԱՐՈՍԼԱՎՍԿԻ

ԻՌԻՍ-ՅԱՊՈՆԱԿԱՆ  
ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԵՎ  
ԲՈԼՇԵՎ ԻԿՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ  
ԴԵՊՒ ԱՅՆ

9(47)

Յս-47

Պ Ե Տ Ը Ր Ա Տ

ԳՐԱԳԱԿՆԵ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ • 1939

3 (47)

ՅԵՄ. ՅԱՐՈՍԼԱՎՍԿԻ 2011-07

ՅՎ-47

24 JAN 2006

ԱԿ

ՌՈՒՍ-ՅԱՊՈՆԱԿԱՆ  
ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԵՎ  
ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԻԸ  
ԴԵՊԻ ԱՅՆ

Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ԲԱՂԱԲԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1939

09 JUL 2013

9 (c) 173

Я 76

БИБЛИОТЕКА  
Академії Наук  
УРСР

~~97722.н.~~



ЕМ. ЯРОСЛАВСКИЙ  
РУССКО-ЯПОНСКАЯ ВОЙНА  
И ОТНОШЕНИЕ К НЕЙ БОЛЬШЕВИКОВ

Армгиз—Издательство полит. литературы  
Ереван, 1939

«Ռուս-յապոնական պատերազմը և բուլղեիկները վերաբերմունքը դեպի այն» աշխատությունը ցույց է տալիս, թե ինչպես ցարիզմի պարտությունն այդ պատերազմում հեղափոխականացրեց ժողովրդական ժասաներին և խարխուլեց ցարիզմը:

Լենինի, Ստալինի աշխատությունների և փաստական նյութերի (բուլղեիկների պրոկլամացիաների) հիման վրա հեղինակը ցույց է տալիս ցարիզմի պարտությանը կողմնակից բուլղեիկների վերաբերմունքը դեպի այդ պատերազմը և բուլղեիկյան կազմակերպությունների աշխատանքը բանակում: Աշխատությունը նկատի ունի ընթերցողների լայն շրջանները:

2895

ՌՈՒՍ-ՅԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ  
ՅԵՎ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ  
ԴԵՊԻ ԱՅՆ

«Իմպերիալիզմը, վորպէս կապիտալիզմի բարձրագոյն ստադիա, Ամերիկայում և Յեվրոպայում, իսկ հետո նաև Ասիայում լիովին ձևալորվել է 1898—1914 թ.թ.: Իսպանո-ամերիկյան (1898), անգլո-բուրական (1900—1902), ռուս-յապոնական (1904—1905) պատերազմները և 1900 թ. անտեսական կրիզիսը Յեվրոպայում—ասիա համաշխարհային պատմութեան նոր եպոխայի պատմական գլխավոր նշանաձողերը» (Լենին) :

1904—1905 թ.թ. ռուս-յապոնական պատերազմը ասիական դեր խաղաց ռուսական առաջին հեղափոխութեան հեղափոխական դեպքերի զարգացման մեջ: Յարական կառավարութեանը պատերազմն սկսեց՝ նպատակ ունենալով Ռուսաստանի աշխատավոր մասսաների ուշադրութեանը հեռացնել հեղափոխութեանից: Իրականում սեղի ունեցալ հակառակը. պատերազմը չափազանց սրեց հեղափոխական կրիզիսը յերկրում և արագացրեց հեղափոխական պոթիկումը:

Ռուս-յապոնական պատերազմը խոր հեռք թողեց իմպերիալիստական ուրիշ պետութեանների և հատկապէս Յապոնիայի հետ ցարական Ռուսաստանի ունեցած միջազգային հարաբերութեանների մեջ:

Կապիտալիզմի տապալումից և Ռուսաստանում Սոցիալիստական Մեծ հեղափոխութեան հաղթանակից հետո ել



8343-53

ռուս-յապոնական պատերազմի ժառանգությունն իրեն զգալ ե տալիս Խորհրդային պետութեան միջազգային հարաբերություններն մեջ: Խորհրդային կառավարութեանը լիովին լիզվիդացիայի յենթարկեց ցարիզմի իմպերիալիստական, դադութարարական ձեռնարկումները Հեռավոր Արևելքում: Չնայած դրան, յապոնական իմպերիալիզմը, վորի գալթիողական ախորժակներն ե'լ ավելի շատ աճեցին, բայց միցս փորձել ե իրագործել իր ազբեստիվ պլանները Խորհրդային Միութեան հաշվին: Յեւլ այժմ, յերբ անասման աճել ե Խորհրդային Միութեան ռազմական հզորությունը ե նրա հեռավոր-արևելյան սահմանների պաշտպանունակությունը, յապոնական ռազմամոլները յերազում են Հեռավոր Արևելքի Խորհրդային հողերը գալթելու մասին: Բայց յապոնական գեներալներն ու քաղաքագետները շարաշար կոխալվեն, յեթե նրանք, կորցնելով պատմական ռեալութեան զգացումը, մոռանան, վոր այժմ դործ ունեն վոչ թե կալե վոտքերի վրա կանգնած հսկայի հետ, վորպիսին ցարական Ռուսաստանն եր, այլ հզոր, յերիտասարդ, որ որի վրա ամբացող Խորհրդային մեծ յերկրի հետ:

Ռուս-յապոնական պատերազմն սկսելու մոմենտից անցել ե 35 տարի, նա լուրջ հարված հասցրեց ցարական Ռուսաստանին ե հսկայական վնաս պատճառեց յերկրի ամբողջ ժողովրդական տնտեսութեանը: Այդ վնասի չափերի մասին կարելի յե դատել այն բանով, վոր 1904—1905 թ.թ. դործող բանակի կորուստները (առանց նավատորմի) սպանված, վիրավորված ե անհետ կորած զինվորներով ու սպաներով կազմում եր ավելի քան 241 հազար մարդ<sup>1</sup>: Ռուս-յապոնական պատերազմի կապակցութեամբ Ռուսաստանի նյութական վնասները միայն 1904 թ. կազմում եյին մոտ 2 միլիարդ ռուբլի վոսկով:

<sup>1</sup> «Русско-японская война 1904—1905 г.г.», т. VII, ч. I, «Тыла действующей армии», стр. 295.

\* \* \*

Հիշատակենք պատերազմին նախորդող հիմնական փաստերը:

«Իմպերիալիզմի հարցի առթիվ»<sup>1</sup> 1916 թ. կոնսպեկտի մեջ Լենինը մատնացույց ե անում իմպերիալիստական յերկրներն յերկու խումբ: Առաջին խմբին՝ գլխավոր, միակցավայն ինքնուրույն յերկրների խմբին նա վերադրում ե Անգլիան, Գերմանիան ե Ամերիկայի Միացյալ Նահանգները: Յերկրորդ խմբին՝ յերկրորդական, բայց վոչ ամբողջովին ինքնուրույն յերկրների թվին Լենինը դասում ե Ֆրանսիան, Ռուսաստանը ե Յապոնիան:

Ռուսաստանը կապիտալիստական մյուս յերկրներից ավելի ուշ վոտք գրեց կապիտալիստական զարգացման ե իմպերիալիզմի ուղին: Սակայն այդ փոքրագույն չափով անգամ չեր թուլացնում ցարական Ռուսաստանի իմպերիալիստական ձգտումները: XX դարի սկզբին ցարական Ռուսաստանն արդեն ծանոթ եր մոնոպոլիստական կապիտալիզմին: Բացի դրանից, «Յապոնիայում ե Ռուսաստանում» գրում ե Լենինը—ռազմական ուժի, անձայրածիր տերիտորիայի կամ ոտարեկրացիներին, Չինաստանը ե այլն կողոպտելու հատուկ հարմարությունների մոնոպոլիան մասամբ լրացնում, մասամբ փոխարինում ե արդի, նորագույն ֆինանսական կապիտալի մոնոպոլիան»<sup>2</sup>:

Դեռ մինչև ռուս-յապոնական պատերազմն սկսվելը Ռուսաստանում յերևան ե գալիս մոնոպոլիստական կապիտալը: XIX դարի 90-ական թվականների վերջին ե XX դարի սկզբին Ռուսաստանում կազմակերպվում են խոշոր սինդիկատներ՝ 1889 թ.—Ելեկտրական սինդիկատը, 1895 թ.—Շաքարի սինդիկատը. 1902 թ.—Պրողամետը («մետաղի վաճառում»), 1903 թ.—Հայելու սինդիկատը, 1904 թ.—Պրողվազոն» ե «Գվոզզ» սինդիկատները, 1904 թ.—Յեմենտի

<sup>1</sup> «Ленинский сборник» XXII, стр. 335.

<sup>2</sup> Ленин, Соч., т. XIX, стр. 309.

սինդիկատը: Կապիտալիստական այդ մոնոպոլիաների կազմակերպման մեջ խոշոր դեր խաղացին բանկերը և ոտարերկրյա կապիտալը, վորը ոռւսական հողն եր տեղափոխում մոնոպոլիստական կազմակերպման այնլի «ժամանակակից», զաւլած ձևերը:

Թե վորքան և աճել ակցիոներական կապիտալների և նրանց կազմում ոտարերկրյա կապիտալի դերը ոռւս-յապոնական պատերազմին նախորդող տասնհինգ տարւլա ընթացքում, յերևում և հետևյալ թւլերից: 1890 թ. ակցիոներական կապիտալները Ռոռւսաստանում կազմում էլին 734 միլ. ոռւբ., այդ թւլում ոտարերկրյա կապիտալը՝ 186 միլ. ոռւբ., այսինքն մոտ մեկ քառորդը: 1905 թ. ակցիոներական կապիտալները Ռոռւսաստանում կազմում էլին մոտ 2,5 միլարդ ոռւբ., ոտարերկրյա կապիտալն արդեն կազմում էր 850 միլ. ոռւբլու մի գումար, կամ 35%-ը:

✕ Ռոռւսաստանի կախւածությունն ոտարերկրյա կապիտալից իր կնիքն եր դրոշմել ցարական կառավարության ամբողջ քաղաքականության վրա և, ինչպես մենք կտեսնենք հետագայում, ոռւս-յապոնական պատերազմի ընթացքի և վախճանի վրա:

Ռոռւս-յապոնական պատերազմի սկզբին Ռոռւսաստանում նոր առաջացող մոնոպոլիստական կապիտալը յեղել և ոռւսական ցարիզմի իմպերիալիստական, գալթոդական ձրդտումների շարժիչներից մեկը:

Շատ կարևոր և նշել, վոր ոռւս-յապոնական պատերազմից դեռ շատ առաջ, 1891 թ., Ենգելսը, խոսելով ոռւսական բուրժուազիայի գալթոդական քաղաքականության մասին, մատնանշում էր, վոր այդ քաղաքականությունը կապւած է ներքին շուկայի թուլության հետ: Բանվորական և գյուղացիական մասսաների աղքատությունը, վոր պայմանավորում էր ներքին շուկայի թուլությունը, «ասիականորեն կռւսական» ոռւսական ցարիզմին մղում էր դեպի նոր հողերի գրաւում, դեպի գաղութների գալթում: Ռոռւս տընաեսագետ-նարոդնիկ Նիկոլայ—ոնին (Դանիելսոնին) ուղղած նամակի մեջ Ենգելսը գրում է. «Ռոռւսական յերիտասարդ

բուրժուազիայի համար ապահովւած ահագին ոգուտները և այդ ոգուտների կախւածությունը բարենպաստ հնձից, վոր այնպես լաւ պարզաբանւած է ձեր ոռւսումնասիրության մեջ, ինձ շատ բան են բացատրում, վորոնք այլ կերպ շատ մութ կթւլային: Այսպես, որինակ, ի՞նչպես պետք է յես մեկնաբանել ինձ համար այսոր առավոտյան Լոնդոնի լրագրերից մեկում կարդացած՝ Ռդեսայից ստացւած թղթակցության հետևյալ պնդումը. ոռւս առևտրական դասակարգերը, ըստ յերևութին, այս ըոպելիս գտնվում են մեկ տիրապետող իդեայի իչխանության տակ, այսինքն—վոր պատերազմը միակ իսկական դեղն է կեղեքման և վարկի բացակայության այն վիճակից, վորով այս ըոպելիս տառապում են ոռւսական արդյունաբերության բոլոր ձյուղերը: Ի՞նչպես պետք է յես հասկանայի և մեկնաբանել ինձ համար այս Ֆրազը, յեթե յես չիմանայի արդյունաբերության տարիներով արհեստականորեն ստեղծւած այդ ամենալիակատար կախւածությունը ներքին շուկաներից, հետևաբար և հնձի բնութից յերկրագործական շրջաններում, քանի վոր նրանից և կախւած այդ արդյունաբերության պրոդուկտները միակ ձեռք բերողների դնողական ուժը: Իսկ քանի վոր այդ շուկան վատ բերքի հետևանքով ձեռքից դնում է, ապա ի՞նչը կարող է ալելի բնական լինել միամիտ մարդկանց համար, յեթե վոչ ձգտել հաջող պատերազմի միջոցով շուկայի ընդարձակման»<sup>1</sup>:

✕ Ռոռւսաստանը և Յապոնիան դեռ XIX դարի վերջին Հեռավոր Արևելքում ընդհարվեցին իրենց ագրեսիւվ պլաններով ու ձգտումներով: Մտադրվելով գրաւել Կորեան և Մանջուրիան, Յապոնիան արդեն այն ժամանակ մտադիր էր իրեն պլացդարմ ստեղծել Ռոռւսաստանի դեմ հետագայում պայքարելու համար: Հեռավոր Արևելքում Յապոնիան իր գալթոդական քաղաքականությամբ ոռւսական ցարիզմի հետ

<sup>1</sup> «Письма Маркса и Энгельса к Николаю—оцу», СПб. 1908 г стр. 62—63.

ավելի պակաս չեր ընդհարվում, քան իմպերիալիստական ուրիշ պետութիւնների հետ:

✓ 1894 թ. յայտնական իմպերիալիստներն առանց վորևե նախազգուշացման հարձակվեցին անպաշտպան Չինաստանի վրա: Ենթոհիվ իմպերիալիստները՝ Գերմանիայի, Ֆրանսիայի և ցարական Ռուսաստանի կառավարութեան միջամտութեան—Յապոնիան չկարողացավ ամբողջապես ողջուվել իր հաղթանակների պտուղներից, վոր ամբացված էլին 1895 թ. Միմոնոսեկի հաշտութեան կողպատիչ դաշնադրով:

✕ Այդ դաշնագրի պայմանների համաձայն Չինաստանն ստիպված յեղավ ճանաչել «Կորեայի լիակատար ու անվերապահ անկախութիւնը», Յապոնիային հանձնել Լյաոդունի թերակղզին, Փորմոզան, Պեսկադորյան կղզիները և մծարել ահագին կոնտրիբուցիա՝ 200 միլ. լան (մոտ 400 միլ. ռուբ.): Յերեք պետութիւնների միջամտութեան շնորհիվ Յապոնիան հարկազրկված յեղավ սահմանափակվել Փորմոզայի, Պեսկադորյան կղզիների գրավումով և կոնտրիբուցիայով, հրաժարվել Լյաոդունի թերակղզուց Պորտ-Արտուրի հետ միասին: Իմպերիալիստական յերեք զիջասիջների ճնշումը Յապոնիայի վրա թելադրանք եր վոչ թէ Չինաստանի անձեռնմխելիութիւնը պահպանելու ձգտման, այլ այդ համեղ պատան իրենց ոգտին պոկելու դադտնի ցանկութեան: Սկսած 1895 թ., ինչպես այդ յերևում է Նիկոլայ II-ի և Վիլհելմի նամակազրութիւնից, ցարական Ռուսաստանը և իմպերիալիստական Յապոնիան յերազում էլին Չինաստանից պոկել նրա տերիտորիայի մի մասը: Նիկոլայը յերազում է Սաղաղ ովկիանոսի ափին չստոչող նաւահանգըստի մասին, իսկ Վիլհելմը՝ պարզապես մի նաւահանգստի մասին, վորը չ«նեղեր» ցարական Ռուսաստանին: Ամփոփելով Յապոնիայի վրա կատարված ճնշման արդիւնքները, Վիլհելմը 1895 թ. ապրիլի 26-ին գրում է Նիկոլային. «Յես կանեմ այն ամենը, ինչ ինձնից կախված է, վորպեսզի Յեվրոպայում պահպանեմ խաղաղութիւնը և պաշտպանեմ Ռուսաստանի թիկունքը, այնպես, վոր վոչ վոք չկարողանա խանգարել քո գործողութիւններին Հեռավոր Արևելքում:

Վորովհետև անտարակուսելի յե, վոր Ռուսաստանի համար ապագայի մեծ ինդիերն է ասիական ափերի քաղաքակրթումը և Յեվրոպայի պաշտպանումը դեղին մեծ ցեղի ներխուժումից: Այդ գործում իմ ուժերի ներածին չափ յես միշտ կլինեմ քո ողնականը: Դու հիանալիորեն լմբունեցիր այդ վերին ցուցումը և արագորեն գտար մոմենտը: Դա քաղաքական և պատմական հսկայական նշանակութիւն կունենա և ամենալավ հետևանքներ: Յես հետաքրքրութեամբ կսպասեմ մեր գործի հետագա զարգացմանը և հուսով եմ՝ ինչպես վոր յես հաճույքով կոգնեմ քեզ հարքելու Ռուսաստանի համար հնարավոր տերիտորիալ աննխախտելի հարցը, այնպես էլ դու բարեհաճորեմ կվերաբերվես այն բանին, վոր Գերմանիան վորևե տեղ մի նաւահանգիստ ձեռք բերի, վորտեղ վոր այդ քեզ չի «նեղի»<sup>1</sup>:

Մենք տեսնում ենք, թէ ինչպես Գերմանիան Նիկոլայ II-ին հրում է դեպի ավանտյուրաների ու դաշութեային զավթումների ուղին: Գերմանիան առաջինն է իրականացնում իր նվաճողական պլանները: 1897 թ. նա Չինաստանից գրավում է Կիաո-Չաո նաւահանգիստը: Քաջալերված Գերմանիայի որինակով՝ Նիկոլայ II-ն անձամբ կարգադրեց ռուսական եսկադրային գրավելու Պորտ-Արտուրը: 1898 թ. այդ զավթումը ձեռնարկվեց Պորտ-Արտուրը 25 տարով կապալով տարու վերաբերյալ Չինաստանի հետ կնքած պայմանագրով: Ռուսաստանը Յապոնիայի առաջ վոսկր նետեց, վերանայելով Կորեայի վերաբերյալ 1896 թ. կնքած պայմանագիրը: Ճանաչվեց Յապոնիայի դերադատելի դրութիւնը կորեայում: Այդ բաժանման ժամանակ Անդլիան գրավեց Վեյ չայ-վեյ չինական նաւահանգիստը:

Այսպիսով, արդեն անցյալ դարի 90-ական թվականներին իմպերիալիստական ուրիշ պետութիւնների հետ միասին ցարական Ռուսաստանը մասնակցում էր Չինաստանի յամժանմանը:

<sup>1</sup> «Переписка Вильгельма II с Николаем II», Гиз, 1923 г., стр. 8 (ընդգծումն իմն է:—Յեմ. Յեմ.):

Կ Յերկրորդ բաժանումը տեղի ունեցավ 1900/01 թ., այսպես կոչված բոֆյուրական ապստամբությունը ճնշելուց հետո, վորն ուղղված էր Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և Յապոնիայի իմպերիալիստական կողուպիչ քաղաքականության դեմ: Բոքսյորական ապստամբությունը ճնշվեց իմպերիալիստների միացյալ ուժերով: Կազմակերպվեց հատուկ պատժիչ կորպուս ինչպես յեվրոպական պետությունների, այնպես էլ Յապոնիայի զորքերից: Այդ կորպուսի ղլխավորը հրամանատար նշանակվեց գերմանացի զենեբալ Վարդերզեսեն: Ֆարական կառավարությունն էլ զորքեր ուղարկեց ապստամբությունը ճնշելու համար: Նշելով այդ իրադարձությունը, Լենինը գրում էր.

«Բոլորը միասին՝ Գերմանիան+Ռուսաստանը+Միացյալ Նահանգները+Յապոնիան+Անգլիան + Ֆրանսիան խեղդում են Չինաստանին»<sup>1</sup>:

1904—1905 թ.թ. ռուս-յապոնական պատերազմը նույնպես Լենինը բնորոշում է վորպես Չինաստանի բաժանում. «(Ռուս-յապոնական պատերազմ): Կողոպտում են («բաժանում են») Չինաստանը և Կորեան (Ռուսաստանը և Յապոնիան)»<sup>2</sup>:

Այսպիսով, անվիճելիորեն կարելի յե հաստատել, վոր Լենինը ցարիզմի ազրեսսիվ քաղաքականությունը համարում էր գրավումների և աննեքսիանների իմպերիալիստական քաղաքականություն: Նույն այդ գնահատականը մենք գտնում ենք նաև ընկեր Ստալինի մոտ:

Նշելով ցարիզմի ձգտումը՝ հափշտակելու ուրիշների հողերը և ստրկացնելու ուրիշ ժողովուրդներին, ընկեր Ստալինը գրում էր. «Ո՞ւմ հայտնի չե, վոր Ռուսաստանում կապիտալի ամենակարողությունը միաձուլվում էր ցարիզմի դեսպոտիզմի հետ, ռուսական նացիոնալիզմի ազրեսսիվությունը՝ գեպի վոչ-ռուս ժողովուրդները ցարիզմի ունեցած դահճային վերաբերմունքի հետ, ամբողջ շրջանների՝

Թյուրքիայի, Պարսկաստանի, Չինաստանի շահագործումը՝ այդ շրջանները ցարիզմի կողմից գավթելու և գավթման համար պատերազմներ մղելու հետ: Լենինն իրավացի յեր՝ ասելով, վոր ցարիզմը «ոպմա-ֆեոդալական իմպերիալիզմ է»: Ֆարիզմը իմպերիալիզմի՝ քառակուսի աստիճանի բարձրացրած ամենարացասական կողմերի կենտրոնակետն էր»<sup>3</sup>: Նույնպիսի գավթողական և իմպերիալիստական քաղաքականություն էր նաև Յապոնիայի սամուրայական ուղմական կլիկի քաղաքականությունը, վորը փորձում էր դեռևս XIX դարի վերջում Չինաստանի հաշվին ամրանալ Ասիայի մայր ցամաքի վրա:

Վոր այդ գավթողական քաղաքականությունը Հեռավոր Արևելքում հղի յեր ապագա պատերազմներով, ապագա ոպմական ընդհարումներով Ռուսաստանի և Յապոնիայի միջև, այդ չեյին կարող չգիտակցել, չեյին կարող չտեսնել հենց իրենք հափշտակիչները:

Գենեբալ Կուրոպատկինն իր որպրում գրում էր, վոր 1898 թ., Պոր-Արտուրի գրավման մոմենտին, արդեն պարզ դարձավ, վոր «գրանով մենք ծանր, անարդարացի կերպով վիրավորեցինք յապոնացիներին, ծիծաղեցինք նրանց վրա, վորովհետև նրանց ձեռքից խլելով հալթության միջոցով նրանց հասած Պորտ-Արտուրը, ինքներս այն գավթեցինք: Պատերազմը դարձավ անխուսափելի, բայց մենք այդ չգիտակցեցինք և պատշաճ կերպով չպատրաստվեցինք նրան: Բոլորը կարծում էյին, թե պատերազմի ու խաղաղության հարցն ամբողջպես մեր ձեռքումն է»<sup>4</sup>:

Բոքսյորական ապստամբությունը ճնշելու համար Ռուսաստանը Մանջուրիա տեղափոխեց ոպմական մեծ կայազոր, վորը 1901 թ. արձանադրությունն ստորագրելուց հետո պետք է դուրս հանվեր: Վերջպես, Ռուսաստանը նաև ձեական պարտալորություն տվեց դուրս հանելու իր զոր-

<sup>1</sup> «Ленинский сборник» XXIX, стр. 287.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 285.

<sup>3</sup> Ստալին, Լենինիզմի հարցերը, հայերեն, էջ 13—14.

<sup>4</sup> «Русско-японская война», из дневника А. А. Куропаткина и Н. М. Линевица, Гиз, 1925 г., стр. 5.

քը: 1902 թ. ապրիլին Ռուսաստանը և Չինաստանը հատուկ համաձայնություն ստորագրեցին, վորի համաձայն Ռուսաստանը յերեք ժամկետներում՝ մեկ ու կես տարվա ընթացքում, 1903 թ. սեպտեմբերին, պետք է մաքրեր Մանջուրիան իր գործերից: Այդ ժամանակ պալատական շրջաններում առաջացավ յերկու խումբ, վորոնք տարբեր վերաբերմունք ունեին ցարիզմի քաղաքականությունը՝ Հեռավոր Արևելքում: Մի խումբը, ներքին գործերի մինիստր Պլեվեյի, Հեռավոր Արևելքի փոխարքա ծովակալ Ալեքսեյևի, Արագայի, Բեգերազովի և ցարական ընտանիքի միջանի այլ անդամների գլխավորությամբ, ներկայացնելով կարվածատերերի օժանդակ խավերի շահերը, զինվորականության շահերը, պաշտպանում էր Հեռավոր Արևելքում անհապաղ ազդեստիայի քաղաքականությունը, շտապեցնում էր Մանջուրիայի և Կորեայի գավթումը: Այդ խումբը դեմ էր Մանջուրիայից գործերը հանելուն, և յերբ վրա հասավ ռուսական գործերը դուրս հանելու յերկրորդ ժամկետը (1903 թ. գարուն), ապա այդ խումբը հասավ այն բանին, վոր ցարական գործերը հետ չկանչվեցին: Ռուսական գործերը զբաղվել էյին վոչ միայն Մուկդենը, այլ նաև մի ամբողջ շարք ուրիշ կետեր: Նրանք շարժվեցին դեպի Կորեա, իրրև թե Յալու գետի շրջակա անտառային կոնցեսիան պաշտպանելու համար, վորի կոնցեսիոներների թվումն էյին ցարը և ցարի մայրը: Միաժամանակ ցարական կառավարությունը գործակալները խուճխուճեցրից շայկաներ էյին կազմակերպում, զինում էյին նրանց:

Պալատականների յերկրորդ խմբի—սակայն Արևելքում իմպերիալիստական հափշտակումներին ամենևին վոչ դեմ—զլուխ կանգնած էյին Կոմս Վիտտեն, ռազմական մինիստր Կուրոպատկինը և արտաքին գործերի մինիստր Լամզերբլը: Ներկայացնելով նոր շուկաներ գավթելուն ձգտող խոշոր բուրժուազիայի շահերը, նոր ծնվող իմպերիալիզմի շահերը, այդ խումբը կանգնած էր ցարիզմի դադարթային քաղաքականությունը պաշտպանություն տեսակետի վրա, սակայն անհրաժեշտ էր համարում յերկարատև և մանրակր-

կիտ նախապատրաստվել պատերազմին: Այսպիսով ցարական կառավարությունը Յեվրոպայի դեմ պատերազմի «էյին մղում խոշոր բուրժուազիան, վորը նոր շուկաներ էր փնտռում, և կարվածատերերի ամենից ավելի օժանդակ խավերը»<sup>1</sup>:

Վերջիվերջո հաղթեց ռազմական ավանտյուրայի քաղաքականությունը, վոր վարում էր պալատական ցարական կլիկը, և այդ հանգամայն անթիվ աղետներին, վոր կրեց ժողովուրդը ռուս-յապոնական պատերազմում:

Տնտեսական կարգի պատճառներից զատ, ցարական միապետությունը Յապոնիայի դեմ պատերազմի յեր դեղում քաղաքական կրիզիսը, վորի մեջ ապրում էր Ռուսաստանը: Ռուսաստանում հասունանում էր հեղափոխական շարժումը: Հեղափոխությունից վախենալով, ցարը ուզում էր պատերազմի միջոցով ժողովրդական մասսաների ուշադրությունը հեռացնել հեղափոխական շարժումից և խեղդել այդ շարժումը: Վիտտեն իր մեծուարներում պատմում է, թե ինչպիսի ցինիկությունը և լիտիությունը Պլեվեն ապացուցում էր վոչ մեծ, բայց հաղթական պատերազմի բռնկելու անհրաժեշտությունը: Այդ պատերազմը պետք է բարձրացներ խախտված ցարիզմի դրությունը, ջարդեր հեղափոխական շարժումը յերկրի ներսում:

«Յարական կառավարությունը հույս ուներ, վոր պատերազմն իրեն կոզնի ամրացնելու իր քաղաքական դրությունը և կանգնեցնելու հեղափոխությունը: Բայց նրա հաշիվները շարդարացան: Յարիզմը պատերազմից ել ավելի թուլացավ»<sup>2</sup>:

1903 թ. հուլիսի 30-ին, Ալեքսեյևի և Բեգերազովի առաջարկությամբ, Հեռավոր Արևելքում փոխարքայություն է կազմակերպվում: Ավելի ազդեստիվ կուրսի կողմնակիցներ Բեգերազովը, Աբազան, Ալեքսեյևը համոզում են

1 «Համկ(ը)ի պատմություն»: Համառոտ դասընթաց, Քաղհրատ, 1938 թ., հայերեն, էջ 74:

2 Նույն տեղում:

ցարին ազգարարել Մանջուրիայի («Դեզին Ռուսիայի») միացումը Ռուսաստանին: 1903 թ. հունիսին Բեզոբրազովը մի գեկուցագիր է ներկայացնում, վորով առաջարկում է դրավել Հյուսիսային Կորեան:

Արևելքում «ազդեցութունների սփերաների» սահմանազծման այդ բոլոր հարցերի շուրջը դիվանագիտական բանակցութուններ ելին տեղի ունենում Նիկոլայ II-ի ցարական կառավարության և յապոնական միկադոյի կառավարության միջև: Յապոնիան տեսնում էր ընդհարումը հետաձգելու հետագա վտանգը, և վորոշեց առաջինը հարձակվել, մասնավանդ վոր յապոնական լավ դրված հետախուզութունը յապոնական կառավարությանը բավականաչափ ապացույցներ էր տալիս այն մասին, վոր Ռուսաստանը պատերազմին պատրաստ է: Յապոնական իմպերիալիստների անհաշտելիության, Ռուսաստանի դեմ բանը անպայման պատերազմի հասցնելու նրանց համառ ձգտման մեջ կարևոր դեր խաղաց այն հանգամանքը, վոր Յապոնիային պաշտպանում էր Անգլիան, վորը վախենում էր Հեռավոր Արևելքում ցարական Ռուսաստանի ուժեղացումից:

1902 թ. հունվարի 30 (17)-ին ստորագրվեց անգլո-յապոնական դաշնակցային պայմանագիրը:

Այդ պայմանագրի համաձայն Անգլիան ընդունում էր Յապոնիայի հատուկ շահերը Չինաստանում և առանձնապես Կորեայում, իսկ Յապոնիան ընդունում էր Մեծ Բրիտանիայի հատուկ շահերը Չինաստանում: Պայմանագրի մեջ ընդունվում էր, վոր յերկրներից յուրաքանչյուրը կարող է անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել իր այդ շահերը պաշտպանելու համար: Անգլիան և Յապոնիան, այսպիսով, պայմանադրվեցին բաժանելու ազդեցության սփերաներն ի հաշիվ Չինաստանի: Սակայն ամենաեյականն այդ պայմանագրում յերկրորդ հոգվածն էր, վորտեղ ասված է, վոր պայմանադրվող տերութուններից մեկի պատերազմելու դեպքում

<sup>1</sup> «Сборник договоров и дипломатических документов по делам Дальнего Востока. 1895—1905», СПб, 1906 г., стр. 589.

834353

մյուս տերութունը վոչ միայն չեզոքութուն է պահպանում, այլև աշխատելու յե խանգարել ուրիշ տերութունների միանալու դաշնակցի դեմ ուղղված դործողութուններին, իսկ յերրորդ տերության մասնակցության դեպքում՝ դաշնակիցներն ոգնում են միմյանց: Այդ նշանակում էր, վոր յեթե Յապոնիայի՝ Ռուսաստանի դեմ ուղղված հնարավոր պատերազմի ժամանակ Ռուսաստանի կողմն անցնի մի յերրորդ տերութուն (նկատի ունեյին Փրանսիան կամ Գերմանիան), ապա Անգլիան կպաշտպանի Յապոնիային: Այն ժամանակ Ամերիկայի Միացյալ Նահանգներն էլ ապահովում էյին իրենց աջակցութունը Յապոնիային: Միացյալ Նահանգների պրեզիդենտ Ռուզվելտը<sup>1</sup> «նույնիսկ հայտարարեց (յեթե հավատանք Ակագի Ուիլեմիտին.—Յեմ. Յա.), վոր ինքը Յապոնիայի դեմ կռալիցիա ստեղծելու դեպքում անհապաղ կկանգնի Յապոնիայի կողմը»<sup>2</sup>:

Փաստորեն Յապոնիան Ռուսաստանի դեմ պատերազմի յեր նախապատրաստվում վերջին տասը տարիների ընթացքում: Այդ նախապատրաստութունը կայանում էր սպառազինումների վիթխարի աճման մեջ. ցամաքային բանակի քանակը պետք է աճեր յերեք անգամ, իսկ ռազմական նավատորմի տարողութունը՝ 4½ անգամ: 1896-ից մինչև 1903 թ. Յապոնիան բանակի և նավատորմի վրա ծախսեց 773 միլ. իեն: Այդ թվերի նշանակութունն էլ ավելի պերճախոս կդառնա, յեթե մենք հաշիվ առնենք, վոր նախորդ ամբողջ տասնամյակի ընթացքում Յապոնիայի բյուջեյի տարեկան ծախսը հավասար էր միայն 80 միլ. իենի, իսկ 1899/1900 թ. բյուջեյի յեկամտային մասը հավասար էր ընդամենը միայն 188,7 միլ. իենի: Հետևաբար, սպառազինումների հսկայական ծախսերը Յապոնիան ծածկում էր ի հաշիվ ներքին և արտաքին փոխառությունների: 1903 թ. ամառը Յապոնիան ավարտեց պատերազմի նախապատրաս-

<sup>1</sup> Տ. Ռուզվելտ (1858—1919 թ.թ.)—ԱՄՆ-ի նախկին պրեզիդենտը:  
<sup>2</sup> Акаги Хидемити, Внешние сношения в Японии в 1842—1936 г.г., Токио, 1936 г., стр. 240.



տության միջոցառումները: Պատերազմը հրահրելու գործն ամբողջապես հանձնվեց ղրվանագիտության ձեռքը:

Դեռ այդ պատերազմն սկսվելուց առաջ Լենինը նախատեսում էր նրա անխուսափելիությունը: 1904 թ. հունվարին կուսակցության խորհրդի նիստում մտցրած բանաձևի նախադժի մեջ Լենինը գրում էր. «Պատմական այն մոմենտը, վոր ապրում է Ռուսաստանը—հեղափոխական խորման հսկայական ուժեղացումը յերկրի ներսում և միջազգային դժվարությունները, վորոնք բնորոշում են պատերազմի հասցնելու,—առանձնապես լուրջ պարտականություններ է դնում գիտակից պրոլետարիատի կուսակցության վրա, պրոլետարիատ, վոր առաջին շնորհերում է կուլում ամբողջ ժողովրդին ինքնակալության լծից ազատելու համար»<sup>1</sup>:

Լենինը նշում է կուսակցական կազմակերպությունն ամրապնդելու անհրաժեշտությունը, վորովհետև դեռ յերբեք բանվորական լայն մասսաների համախմբվածություն և նրանց գիտակցականությունը բարձրացման անհրաժեշտությունն այդպիսի ուժով չէր զգացվել:

\* \* \*

Իր սովորություն համաձայն, յապոնական նավատորմը, պատերազմ չհայտարարելով, հունվարի լույս 27-ի (փետրվարի լույս 9-ի) գիշերը հարձակվեց ռուսական խաղաղովկիանոսյան նավախմբի վրա, վորը գտնվում էր Պորտ-Արտուրի դրսի ռեյդում: Չնայած Ռուսաստանի և Յապոնիայի հարաբերությունները ծայրահեղորեն լարվել էյին և դեռևս հունվարի 24-ին (հ. տ.) Յապոնիան հայտարարել էր Ռուսաստանի հետ իր ղրվանագիտական հարաբերությունները խզելու մասին, ադմիրալ Ալեքսեյովը, Հեռավոր Արևելքի փոխարքան և ծովակալ Ստարկը, վորը նավատորմի հրամանատարն էր, վոչինչ չէյին արել խաղաղովկիանոսյան նավախումբը անվտանգ դարձնելու համար: Ռազմանավերը մարտականորեն պատրաստ չէյին: Հարձակման մոմենտին նույ-

նիսկ անհրաժեշտ պահակություն չէր նշանակվել: Կաթսաները չէյին տաքացվել, ականային ցանցերը չէյին իջեցված: Բերդի և նավատորմի համարյա ամբողջ ռազմական հրամանատարությունն ուրախ տոնում էր ադմիրալ Ստարկի կողմնավանակչությունը: Բայց «խնձույքը վերջացավ նրանց դժբախտությունը»:

Ռուսական նավատորմի վրա յապոնական նավատորմի կատարած այդ ակազակային հարձակման ժամանակ շարքից հանվեցին (պայթեցվեցին) յերկու լավագույն զրահակիրներ՝ «Ռետովիզանը» և «Յեսարեիչը» և մի հաժանաթ՝ «Պալլադան»: Մյուս որը, հունվարի 27-ին Չեմուլպոյի տակ յապոնացիների կատարած յերկրորդ զրոհի ժամանակ շարքից հանվեցին «Վարյագ» հաժանաթը, «Կորեյեց» հրետանավը և «Սունդարի» շոգենավը: Հունվարի 29-ին, ըստ յերևութին, իր սեփական ականով, խորտակվեց «Յենիսեյ» ջերմանավը, իսկ փետրվարի 1-ին նույն պատճառով խորտակվեց «Բոյաբին» հաժանաթը և մի շարք կատերներ:

Փետրվարի 23-ին Պորտ-Արտուր ժամանեց ցարական կառավարության ռազմական լավագույն ծովագնացներից մեկը՝ ծովակալ Մակարովը: Նրան հաջողվեց արագորեն վերանորոգել նավերի վնասվածքները և եսկազրային մարտական տեսք տալ: Բայց գործի կազմակերպումն այնքան վատ էր դրված, վոր մարտի 31-ին ծովակալ Մակարովը, յապոնացիների հետ մարտի բռնվելու փորձի ժամանակ, վորպեսզի ճեղքի յապոնացիների բլոկադան, գտնվելով «Պետրոպավլովսկ» զրահանավի վրա, բաղլվեց ականի և ամբողջ շտաբի ու անձնակազմի հետ սուզվեց ջրի տակ: ✓

✓ Մնացած նավատորմը, Պորտ-Արտուրում փակված լինելով, յերկու անգամ (1904 թ. հունիսին և հուլիսին) փորձ արեց միանալու Վլադիվոստոկի եսկազրայի հետ, բայց ապարդյուն: Առաջին անգամ եսկազրան նույնիսկ փորձ չարեց մարտ սկսել, այլ, հանդիպելով յապոնացիներին, հետ դարձավ դեպի նավահանգիստ: 1904 թ. հուլիսի 28-ին Վեյ-Հայ-վեյի մոտ տեղի ունեցած մարտի ժամանակ յապոնացի ադմիրալ Տոգուն ջախջախում է նաև այս նավատորմը: Սա-

<sup>1</sup> Լենին, Յերկ. հ., VI, էջ 144 (ընդգծումն իմն է.—Յեմ. Յա.):

կայն պետք է ասել, վոր այդ մարտում յայտնացիներին չհաջողվեց խորտակել ուսական վոչ մի նավ: Նավերի մի մասը լուրջ վնասվածքներ ստացան: Նավատորմի հրամանատար ադմիրալ Վիրտգեֆտն սպանվեց: Նոր հրամանատար իշխան Ուխտոմսկին վճռեց մարտը չչարունակել և վերադարձավ Պորտ-Արտուր: Այդ նահանջի ժամանակ մի քանի նավեր եսկադրայից հետ մնացին, մտան չեզոք նավահանգիստներ և զինաթափ արվեցին: Նավատորմի մնացած մասը նորից վերադառնում է Պորտ-Արտուր, վորտեղ նույնպես զինաթափ է արվում: Հրետանին հանվում է բերդի պաշտպանությունն ու թեղադրելու համար, իսկ նավաստիներին միացնում են կայազորի կազմին:

Այսպես անհաջող էր մղվում այս հանցապարտ պատերազմը:

Այստեղ մենք չենք նկարագրում առանձին ճակատամարտերը: Այն ժամանակվա ամեն մի գոհեհիլ հրատարակություն մեջ կարելի չէր տեսնել ցարիզմի անամոթ պարծենկոտությունը, վոր նպատակ ուներ քեցեցել ուս ժողովրդին այնպիսի հեքիաթներով, թե՛ յայտնացիներն անգոր են և թե Ռուսաստանը գլխարկներով դեն կշարտի նրանց: Յայտնացիներին հեշտ հաղթելու մասին տխմար հեքիաթներ էլին տարածվում: Գաղաքներում ամենուրեք սևահարյուրյակայինների և ցարական պահուրդական բաժնի ազենաների գլխավորությունը հայրենասիրական մանիֆեստացիաներ էլին կազմակերպվում «Боже, царя храни» յերգելով, ցարի նկարներով, հիմներով և այլն: Սակայն շատ շուտ է տեղի ունենում զգաստացումը: Պատերազմի թատերաբեմից մեկը մյուսից տխրադին լուրեր են գալիս: Տյուրենչենի մոտ տեղի ունեցած առաջին իսկ մեծ մարտը ուսական բանակին նստեց 2500 մարդ: Յայտնացիները, Յարու գետն անցնելով, ուսական 20 հրանոթի դեմ հանեցին 120 հրանոթ և արագորեն լռեցրին ուսական հրետանին: Այս կովում նրանք ուսաների նկատմամբ ունեյին նաև նշանակելի չափով քանակական գերակշռություն (Կուրոկիի ամբողջ բանակը կանգնած էր գեներալ Չասուլիչի 20.000 հոգուց կազմված

զորամբի դեմ, վորը փռված էր աննշան տարածության վրա): Թեև Տյուրենչենի ճակատամարտը հենց այն ավանդարդային ճակատամարտն էր, վորին մասնակցություն ունեցավ ուսական բանակի աննշան մասը, այնուամենայնիվ, այն անբարենպաստ ազդեցություն ունեցավ բանակի բարոյական վիճակի վրա: Գեներալ Կուրոկիից ջարդված ուսաները նահանջեցին, կորցնելով 21 հրանոթ և 8 գնդացիր: Գեներալ Չասուլիչը խայտառակ կերպով փախավ մարտի դաշտից, չնայած զինվորները արիարար մարտնչում էլին: Միայն զինվորների հերոսություն և հնարամտություն շնորհիվ ուսաներին հաջողվեց նահանջել համեմատաբար վոչ մեծ կորուստներով: Դրանից հետո սկսվեցին ուսական բանակի մի շարք ամենախուշոր պարտությունները:

Առանձնապես արյունալի յեր ճակատամարտը և ծանր կորուստներ յեղան Լյաոյանի, Շախեի և Մուկդենի կռիվներում: Լյաոյանի մոտ ընդհարվեցին յերկու մեծ բանակներ. ուսական բանակը, վոր ուներ 150 հազար մարդ և յայտնականը՝ 120 հազար մարդ: Այդ մարտերում ուսաները կորցրին 15 հազ. մարդ: Յայտնացիների կորուստները ավելի շատ էլին, քան ուսաներինը, բայց Կուրոկիինը հանդես բերեց անթույլատրելի վախկտություն և նահանջեց, կովի մեջ չմտցնելով բավականաչափ ուժեր:

«Պատերազմի ամբողջ ընթացքում նյութական և բարոյական տեսակետից հաղթանակը վոչ մի անգամ այնքան մոտիկ չէր մեզ, ինչպես Լյաոյանի ստաջավոր դիրքերում», — գրում է պատերազմի մի պատմաբան: Հաղթանակի համար բոլոր շաներն ունենալով, հրամանատարություն անշնորհքություն պատճառով բանակը նահանջում էր, թըռնամուն հանձնելով ամբացված դիրքերը:

1904 թ. սեպտեմբերին Շախե գետի մոտ տեղի ունեցած մարտերում ընկան 62 հազար մարդ, վորոնցից 42 հազարը ուսական բանակի զինվորներ էլին: Ռուսական բանակը կորցրեց 44 հրանոթ և ռազմամթերքի հսկայական պաշար:

1904 թ. դեկտեմբերի 20-ին (հ. տ.) ամենաարյունալի կռիվներից հետո, ուսական բանակից մոտ 27 հազ. սպան-

ված և վերավոր կորցնելուց հետո Պորտ-Արտուրը հանձն-  
վեց: Սա ցարական կառավարութեան խոչորագույն պար-  
տութիւնն էր: Սակայն պետք է նշել, վոր Պորտ-Արտուրի  
պաշարման ժամանակ յապոնացիներէ կորուստներն էլ անց-  
նում են 100 հազ. մարդուց: Այդ կորուստները յերկու և  
նույնիսկ յերեք անգամ շատ կլինեյին, յեթե բերդի պարետ  
գեներալ Ստեսսելը և նրա մերձավոր ոգնական գեներալ  
Յուկը ուզեյին կազմակերպել բերդի պաշտպանութիւնը, և  
վոչ թե դավաճանորեն բերդը հանձնեյին յապոնացիներին:  
Ստեսսելի մատնութեան և դավաճանութեան հանցանշաններն  
այնքան բացահայտ եյին, վոր նույնիսկ ցարական կառա-  
վարութիւնն ստիպված յեղավ նրա դեմ դատական պրոցես  
կազմակերպել: Դատարանը Ստեսսելին հանցավոր ճանաչեց  
բերդը թշնամուն հանձնելու մեջ: Բերդի դրութիւնը քննար-  
կած ռազմական խորհուրդը անհրաժեշտ է համարում շա-  
րունակել բերդի պաշտպանութիւնը, իսկ մի որից հետո  
Ստեսսելը յապոնացիներէ մոտ պատգամավորե ուղարկում՝  
բերդը հանձնելու առաջարկութեամբ: Բերդը հանձնվում է:  
Յերախտապարտ յապոնացիները Ստեսսելին իր ընտանիքի և  
զույքի հետ միասին ուղարկում են ռուսական բանակի թի-  
կունքը: Պետերբուրգում Ստեսսելին դիմավորեցին վորպես  
հերոսի և պարգևատրեցին Գեորգիի շքանշանով՝ արիու-  
թեան համար, և միայն ավելի ուշ մերկացվեց Ստեսսելի  
մատնութիւնը, և այն էլ վոչ ամբողջովին: Յամաքի վրա  
ցարիզմի պարտութիւնների յեզրափակիչ մոմենտը մուկ-  
դենյան գլխավոր ճակատամարտն էր: Մինչ համաշխարհա-  
յին պատերազմը դա խոչորագույն ճակատամարտն էր հա-  
մաշխարհային պատմութեան մեջ, մի մարտ, վորին յերկու  
կողմերից մասնակցում էյին 600 հազարից ավելի զինվոր,  
մոտ 2000 դաշտային հրանոթ, 400-ից ավելի պաշարողական  
հրանոթ, 256 զնդացիք, յերկու կողմերի ուժերն էլ իրար  
հափասար էյին:

Մուկդենի մոտ ռուսական բանակն ուներ 330 հազ.  
մարդ: Կռիվների սկզբում, վոր սկսվեցին փետրվարի 10-ին,  
ռուսական բանակը նույնիսկ վորոշ հաջողութիւն ունեցավ:

Սակայն այդ հաջողութիւնը չամրացվեց և չգարգացվեց  
դեներալներ Կուրոպատկինի և Կաուլբարսի անվճռականու-  
թեան և վախկոտութեան պատճառով, վորոնք իր ժամանա-  
կին չկարողացան հետ մղել յապոնական բանակի շրջանցու-  
մը և մյուս ճակատամասերում անցնել վճռական հարձակ-  
ման:

Իրենց պետերի մատնութեան, վախկոտութեան և դավա-  
ճանութեան փոխարեն ստիպված էյին հատուցել զինվոր-  
ները—գյուղացիները և բանվորները: Մուկդենի մոտ տեղի  
ունեցած զարհուրելի ճակատամարտերում (1905 թ. փետրը-  
վար) ռուսական բանակի կորուստները, առանց գերինների,  
հասնում է 89 հազար մարդու: Յապոնացիներէ կորուստնե-  
րը պակաս էյին: Ռուսական բանակի նահանջը Մուկդենից  
արդեն նման էր անկարգ փախուստի: Թշնամու ձեռքն ըն-  
կան մարտական հանդերձանքի հարուստ պաշարներ և պա-  
րենի պաշարներ: Մուկդենից հետո մինչև հաշտութիւն  
կնքելը ցամաքային բանակում խոչոր ճակատամարտեր  
այլևս չեն յեղել:

Յարական բանակի պարտութեան մեջ մեծ դեր խաղաց  
նրա անպատրաստ լինելը լուրջ ճակատամարտերին, հրա-  
մանատարութեան անվճռականութիւնը, վոր հաճախ հաս-  
նում էր վախկոտութեան և դավաճանութեան, ցարական գե-  
ներալների ապիկարութիւնն ու ծախվածութիւնը:

Ռազմական մինխտրութեան որդան «Русский инва-  
зия»-ի հաշիվներով, պատերազմի սկզբից մինչև 1905 թ.  
մարտի 1-ը Հեռավոր Արեւելք է ուղարկվել 13·087 սպա,  
761·467 զինվոր, 146·408 ձի, 1·521 հրանոթ և 19·524·977  
փութ բեռ: Մարդկային կազմի մի յերրորդ մասը և հսկա-  
յական քանակութեամբ սպառազինութիւն կործանվեցին  
այդ պատերազմում, չնայած զինվորները կռվում էյին խի-  
զախորեն և մեծ համառութեամբ:

Պատերազմը թանգ նստեց նաև յապոնական ռազմա-  
ֆեոդալական իմպերիալիզմին: Միայն զուտ ռազմական  
ծախսերը հասան համարյա 2 միլիարդ իենի, այսինքն՝ 7—8  
անգամ ավելի, քան Յապոնիայի նախապատերազմյան վեր-

Ջին տարվա բյուջեն: Յապոնիայի պետական սլարտքն աճեց 1·800 միլ. իենով, վորից համարյա 1 միլիարդը (107 միլ. Փոլեստ ստերլինգ) գտնվում էր անդր-ամերիկյան բորսաներում: Այդ փոխառությունների տոկոսները հետո ծանր բեռի նման ընկան աշխատավորների ուսերին:

Յապոնացիների մարդկային կորուստները պատերազմում ավելի պակաս չէին, քան ուսական բանակի կորուստները: Պատերազմի վերջում Յապոնիան ուզում էր նետել վոչ միայն բոլոր կանոնավոր զորամասերը, այլև մորիլիդացիայի յեր յենթարկել իր բոլոր պահեստի. ուսուրները: Զարմանալի չէ, վոր Յուսիմայից յերեք ու անց Յապոնիան առաջինը դիմեց ԱՄՆ պրեզիդենտ Ռուզվելտին՝ առաջարկելով հանդես գալու իրրև միջնորդ և կազմակերպելու կովոդ կողմերի հանդիպումը հաշտության բանակցություններ վարելու համար:

\* \* \*

Լենինն ուշադիր կերպով հետևում էր պատերազմի ընթացքին, վորովհետև նախատեսում էր նրա հեղափոխական հետևանքները: Լենինը նախատեսում էր պատերազմի հեղափոխականացնող ազդեցությունը ցարական Ռուսաստանի ժողովրդական մասսաների վրա, վորոնց ուսերի վրա ընկալ ցարական ինքնակալության հանցադրոժ ավանտյուրայի հետևանքների ամբողջ ծանրությունը:

Լենինը, նրա հետ մահ մյուս բոլշևիկներն այդ պատերազմում պարտվողականներ էյին: Նրանք տեսնում էյին, վոր ցարական բանակի պարտությունը կհանգի յերկրի հեղափոխականացման, կարագացնի հեղափոխությունը, կթուլացնի ցարական ինքնակալությունը, կողնի նրա նեխվածության մերկացմանը:

«Ինչի՞ յենք ձգտում մենք» հողվածում Լենինը գրում էր.

«...Ռուսաստանի սպրած պատմական մոմենտը մեր կուսակցությունից պահանջում է լարել իր բոլոր ուժերը: Հեղափոխական հուզումը բանվոր դասակարգի մեջ, լամո-

թումը ընակչության մյուս խավերում շարունակ աճում է. պատերազմը և ճգնաժամը, սովն ու գործազրկությունը ավելի ու ավելի խորն են փորում ինքնակալության հիմքերը, խայտառակ պատերազմի խայտառակ վախճանն այնքան էլ արդեն հեռու չէ, և այդ վախճանն անխուսափելիորեն տասնապատկելու յե հեղափոխական հուզմունքը, բանվոր դասակարգին կանգնեցնելու յե դեմ առ դեմ նրա թշնամիների հետ, ամենավճռական հարձակողական միջոցներ է պահանջելու սոցիալ-դեմոկրատիայից»<sup>1</sup>:

Լենինը պնդում էր բոլոր հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կուսակցական կազմակերպությունների համախմբման վրա, այնպիսի պայմաններ ստեղծելու վրա, վորոնք ապահովեն բանվոր դասակարգի վճռական գրոհը ցարական ինքնակալության վրա:

Մենչևիկները հենց սկզբից այլ դիրք բռնեցին: Նրանց դիրքը վոչնչով չէր տարբերվում լիբերալների դիրքից: Դանի և Տրոցկու կողմից առաջ քաշված՝ «Հաշտություն ինչ գնով էլ լինի» լողունգը դարձավ մենչևիկների լողունգը: Բայց չէ՞ վոր կադետներն էլ էյին առաջադրել նույն այդ լսզունգը, վոր չափազանց շահավետ էր վոչ միայն ուսաստանյան, այլև ոտարերկրյա բուրժուազիային:

«Մենչևիկները, այդ թվում նաև Տրոցկին, գլորվում էյին պաշտպանողականության, այսինքն՝ ցարի, կալվածատերերի և կապիտալիստների «հայրենիքի» պաշտպանության դիրքերը»<sup>2</sup>:

Յեկրոպայի և Ամերիկայի յերկրների բուրժուազիան տեսնում էր, թե ինչպես ուս-յապոնական պատերազմում ցարական բանակի պարտությանձ ազդեցության տակ աճում և ընդարձակվում է հեղափոխական շարժումը Ռուսաստանում: Վորքան ավելի լայնորեն, խոր ու պայծառ կերպով էյին տեղի ունենում հեղափոխական իրադարձությունները

<sup>1</sup> Լենին, Յերկ., հ. VI, հայերեն, էջ 481:

<sup>2</sup> Համի(բ)ի պատմություն: Համառոտ դասընթաց. Քաղհրատ, 1938 թ., էջ 75:

Ռուսաստանում, այսինքն ավելի արագորեն Լոնդոնի, Նյու-Յորկի, Փարիզի և Բեռլինի բորսաների դործիչները դալիս եյին այն գիտակցության, վոր ուսո-յապոնական պատերազմը կարող է հանգել հեղափոխության, իսկ այդ հեղափոխությունը չի սահմանափակվի Ռուսաստանի շրջանակներով:

Լենինը գտնում էր, վոր յապոնական իմպերիալիստներից Հեռավոր-Արևելքում ցարական Ռուսաստանի կրած պարտությունը մոտեցնում է հեղափոխական լուծումը, մոտեցնում է ցարական ինքնակալության վախճանը, ուժեղացնում է հեղափոխության հզորությունը:

Ահա թե ինչու յեր Լենինն այդպես խիստ քննադատում մենչևիկյան «Искра»-յի գեմատվային կամպանիայի ոպորտունիստական պլանը, վորը բանվոր դասակարգին դատապարտում էր յենթարկվելու լիբերալ բուրժուազիային: Լենինը գտնում էր, վոր պատերազմն այնպիսի մոմենտ է ստեղծել, յերբ ցարական ինքնակալությունն «առանձնապես ակնհայտորեն է յերեբվում և յերբ լուրջ հարվածն առանձնապես անհրաժեշտ է, առանձնապես ոգտակար է և կարող է դառնալ վճռական հարված»<sup>1</sup>: Իսկ մինչդեռ այդ նույն մոմենտին մենչևիկները բանվոր դասակարգին խորհուրդ եյին տալիս վարել մի տակտիկա, վորը չվախեցներ և չահարեկեր գեմատվոյականներին, խուճապ չառաջացներ «ոպոզիցիայի», այսինքն հեղափոխությանը թշնամի լիբերալ բուրժուազիայի շրջանում:

1904 թ. աշնանը բանը հասավ արդեն հեղափոխական ցույցերի: Դրանք պատերազմի դեմ ուղղված բողոքի ցույցեր եյին. հոկտեմբերին Պետերբուրգում—ցույց վիրտոզյան բանտի մոտ, Մոսկվայում—ուսանողների բողոքի ցույցը պատերազմի դեմ: Այդ փաստերի հիման վրա Լենինը ցույց է տալիս, թե ինչպես մենչևիկյան տակտիկան հակասության մեջ ընկավ հեղափոխական կյանքի իրադարձությունների հետ: Մենչևիկների տակտիկայի համաձայն պետք էր պայ-

քարել այդ ցույցերի դեմ, վորովհետև նրանք, անկասկած, վախեցնում եյին գեմատվային ոպոզիցիային: Քննադատելով գեմատվային կամպանիան և մենչևիկյան «Искра»-յի պլանը, Լենինը գրում էր, թե պատերազմը և ուղղական պարտության հնարավորությունը անխուսափելիորեն կստեղծեն քաղաքական կրիզիս, վորից դուրս դալու միայն մի յեւք կարող է լինել՝ համաժողովրդական գինված ապստամբությունը:

«Ինքնակալությունը և պրոլետարիատը» հոդվածի մեջ Լենինը դարդացնում էր պրոլետարիատի և նրա կուսակցության՝ բոլշևիկների կուսակցության պայքարի հստակ դիժը. «Ռուսական պրոլետարիատի վրա ամենալուրջ խնդիր է դրված,—գրում էր Լենինը:—Ինքնակալությունը տատանվում է: Ծանր և անհուսալի պատերազմը, վորի մեջ նա նետվել է, խորապես խախտել է նրա իշխանության և տիրապետության հիմունքները: Այժմ նա չի կարող մնալ առանց կառավարող դասակարգերին դիմելու, առանց ինտելիգենցիայի պաշտպանության, իսկ այդպիսի դիմումը և այդպիսի աջակցությունն անխուսափելիորեն իրենց հետևից բերում են սահմանադրական պահանջներ: Բուրժուական դասակարգերն աշխատում են իրենց ոգտին վերագրել կառավարության դժվարին կացությունը: Կառավարությունը հուսահատ խաղ է խաղում, վորպեսզի դուրս պրծնի, ապատվի անշան գիջումներով, վոչ-քաղաքական ռեֆորմներով, վոչինչ չպարտավորեցնող խոստումներով, վորոնցով լիքն է ցարական նոր հրովարտակը: Կհաջողվի արդյոք թեկուզ ժամանակավորապես և մասնակիորեն այդպիսի խաղը, այդ կախված է, վերջին հաշվով, ուսական պրոլետարիատից, նրա կազմակերպվածությունից և նրա հեղափոխական գրոհի ուժից: Պրոլետարիատը պետք է ոգտվի իրեն համար արտասովոր կերպով շահավետ քաղաքական դրությունից: Պրոլետարիատը պետք է աջակցի բուրժուազիայի սահմանադրական շարժմանը, թափահարի և իր շուրջը համախմբի շահագործվող ժողովրդական մասսաների վորքան կարելի յե լայն խավեր, հավաքի իր բոլոր ուժերը և

<sup>1</sup> Ленин, Соч. т., VII, стр. 7.

ապստամբություն բարձրացնի կառավարութեան առավելա-  
զույն հուսահատութեան մոմենտին, ժողովրդի առավելա-  
պես վրդովված մոմենտին»<sup>1</sup> :

\* \* \*

Պատերազմի կապակցութեամբ կուսակցական կոմիտե-  
ները տեղերում հսկայական ազիտացիոն աշխատանք ծավա-  
լեցին: Այն ժամանակվա թուրքիկները ամենամեծ մասը,  
հատկապես զինվորներին և նավաստիներին ուղղված թուր-  
քիկները, կապված եր ուսու-յապոնական պատերազմի հետ:

Այդ պրոկլամացիաները տարածվում էին վոչ միայն  
թիկուհում՝ զորանոցներում, պահեստայինների մեջ, Հե-  
ռափոր-Արեւելք ուղեորվող եշելոնների վազոններում, — այլ  
նաև Փրոնտում, և նրանք այնտեղ ջերմ արձագանք էին  
գտնում զինվորական մասսաների մեջ: Չկար կուսակցական  
վոչ մի կոմիտե, վորը պատերազմի կապակցութեամբ մի-  
ջանի թուրքիկներ բաց չթողներ:

«Մայիսի մեկը» թուրքիկի նախագծում, վոր կազմել եր  
Լենինը 1904 թվականին, ասված եր.

«... ցարական կառավարութեանն իր մոլեգին խաղի  
մեջ, խաղաղ Ովկիանոսի ափերին կորչող ժողովրդական  
ունեցվածքի և յերիտասարդ ուժերի հանցադործ կո-  
դուպտման մեջ ամեն սահման անցել է: Ամեն մի պատերազմ  
ժողովրդական ուժերի լարում և պահանջում, իսկ կուլտու-  
րական և ազատ Յապոնիայի դեմ մղվող ծանր պատերազմը  
Ռուսաստանից պահանջում և վիթխարի լարում: Յեվ այդ  
լարումն ընկնում և այնպիսի մոմենտի, յերբ վոստիկանա-  
կան ինքնիշխանութեան շնքն սկսել և արդեն յերբվել  
արթնացող պրոլետարիատի հարվածների տակ: Պատերազմը  
մերկացնում և կառավարութեան բոլոր թուլ կողմերը, պա-  
տերազմը պոկում և կեղծ ցուցանակները, պատերազմը  
բացահայտում և ներքին նեխվածութեանը, պատե-  
րազմը ցարական ինքնակալութեան անհեթեթութեանը

հասցնում և մինչև այնտեղ, վոր այն ամենքի և յուրաքան-  
չյուրի աչքին և ընկնում, պատերազմը ցույց և տալիս հին  
Ռուսաստանի, իրավազուրկ, խախար ու ծեծկված Ռուսաս-  
տանի, վոստիկանական կառավարութեանից կախման մեջ  
մնացող Ռուսաստանի հոգեարքը»:

Թուրքիկը վերջանում և «կորչի հանցադործ և ավա-  
ղակային ցարական ինքնակալութեանը» լողունգով<sup>1</sup> :

\* \* \*

1904 թ. դեկտեմբերի 20-ին (հ. տ.) կապիտուլյացիայի  
յենթարկվեց առաջնակարգ բերդ՝ Պորտ-Արտուրը, վորի ամ-  
րացման վրա հսկայական միջոցներ էին ծախսվել: Պորտ-  
Արտուրի անկումն արևմտա-յեվրոպական բուրժուազիան  
դիտում եր վորպես պատմական կատաստրոֆ: Բուրժուա-  
կան «Փրանկֆուրտեր ցայտունը» լրագիրը գրում եր. «Փըլ-  
վում և հզոր իմպերիայի բարոյական ուժը, նսեմանում և  
այն յերիտասարդ ուսսայի հեղինակութեանը, վոր դեռ չի  
կարողացել ինչպես հարկն և ծավալվել: Քաղաքական մի  
ամբողջ սիստեմի դատավճիռն և հանվում, ընդհատվում են  
յերկար շարք պահանջները, կոտրվում են հզորագույն ջան-  
քերը»:

Նշելով այդ հազորագրութեանը, Լենինն իր նշանավոր  
«Պորտ-Արտուրի անկումը» հոդվածի մեջ տալիս և ուսու-  
յապոնական պատերազմի և Պորտ-Արտուրի մոտ ցարական  
բանակի պարտութեան պատճառների փայլուն անալիզը: Լե-  
նինը նշում եր, վոր յեվրոպական ռեակցիայի հուսալի հե-  
նարան հանդիսացող ռազմական ուժի կրախը, ցարա-  
կան Ռուսաստանի կատաստրոֆան յեվրոպական ամբողջ  
բուրժուազիայի համար «սարսափելի» յե թվում այն պատ-  
ճառով, վոր «... այդ կատաստրոֆան նշանակում և համաշ-  
խարհային կապիտալիստական զարգացման վիթխարի ա-  
րագացում, պատմութեան արագացում, իսկ բուրժուազիան  
չատ լավ, չափազանց լավ դիտե, դառն փորձով դիտե, վոր

<sup>1</sup> Ленин, Соч., т. VII, стр. 32.

<sup>1</sup> Ленин, Соч., т. XXX, стр. 77.

այդպիսի արագացումը պրոլետարիատի սոցիալական հեղափոխութեան արագացումն է»<sup>1</sup> :

«Այո, յեվրոպական բուրժուազիան վախենալու բան ունի, — այնուհետև դրո՞ւմ է Լենինը: — Պրոլետարիատը իրոք վոր ուրախանալու բան ունի: Մեր ամենավոխերիմ թշնամուկատաստրոֆան նշանակում է վոչ միայն ռուսական աղափոխութեան մտտեցումը: Այն նախագուշակում է նաև յեվրոպական պրոլետարիատի հեղափոխական նոր վերելքը»<sup>2</sup> :

Լենինը բացատրում է, թե ինչու հատկապես Պորտ-Արտուրի անկումը յեվրոպական բուրժուազիայի համար և առանձնապես ռուսական բուրժուազիայի համար հանդիսանում է կատաստրոֆա:

«Յապոնացիները պատերազմի զլխավոր նպատակին հասել են: Պրոգրեսսիվ, առաջավոր Ասիան անուղղելի հարված հասցրեց հետամնաց և ռեակցիոն Յեվրոպային»<sup>3</sup> : Ռուս-յապոնական պատերազմից միջանկ տարի առաջ յեվրոպական իմպերիալիզմը միացավ, վորպեսզի միացյալ ուժերով սահմանափակի Յապոնիայի ախորժակը: Դրա շնորհիվ ցարական Ռուսաստանը զավթեց Պորտ-Արտուրը: Պորտ-Արտուրի ամրացման, յերկաթուղիներ կառուցելու և նավատորմի վրա ցարական Ռուսաստանը ծախսեց հարյուրավոր միլիոն ռուբլիներ: Յարական կառավարութեան կողմից զնված յեվրոպական մամուլը փառաբանում էր Պորտ-Արտուրը, վորպես անառիկ ամրոց, վորն իր ուժով հավասար է վեց Սեվաստոպոլի: «Յեվ ահա բոլորի կողմից մինչ այդ արհամարհված, փոքրիկ Յապոնիան ութ ամսվա ընթացքում տիրապետում է այդ ամրութեան, մինչդեռ Անգլիան ու Ֆրանսիան մի ամբողջ տարի միասին քարշ յեկան միայն Սեվաստոպոլը գրավելու վրա»<sup>4</sup> :

Յարական Ռուսաստանի այդ պարտութեանը Լենինը

համարում էր անուղղելի, վորովհետև այն վճռեց ռուս-յապոնական պատերազմի զլխավոր ու արմատական հարցը — ծովի վրա գերիշխելու հարցը: Ռուսական խաղաղովկիանոսյան նախատորմն ամբողջովին վոչնչացվեց, իսկ յապոնական ուժեղացավ, վորովհետև յապոնացիները շուտով հանեցին ռուսական խորտակված նավերը: Բացի դրանից, յապոնացիներն ազատեցին բերդի պաշարումով զբաղված 100-հազարանոց բանակը և կարողացան այն շարժել ընդդեմ Կուրոպատիկինի: Այդ բանակը մասնակցեց մուկդենյան ճակատամարտին և ռուսական բանակի պարտութեան մեջ վերջին դեր չխաղաց:

Սակայն բանը միայն ռազմական պարտութեանը չէր: «Ինքնակալութեան կրած ռազմական կրակը ե՛լ ավելի մեծ նշանակութեան է ստանում, վորպես քաղաքական մեր ամբողջ սխտեմի խորտակման նշան»<sup>1</sup>, — գրում էր Լենինը: Յարական ինքնակալութեան ռազմական պարտութեանները մասսաների առաջ ցայտուն կերպով հաստատեցին Ռուսաստանի պրոլետարիատի և բոլոր առաջավոր մարդկանց կողմից ինքնակալութեան քննադատութեանը: Պորտ-Արտուրի անկումը ամենայն պարզորոշութեամբ բացահայտեց ցարական ինքնակալութեան նեխվածութեանը, նրա շահերի անհամատեղելիութեանը ժողովրդի շահերի հետ, նրա ռազմական անընդունակութեանը: «Իեղեցիկ դադադ — ահա թե ինչ դուրս յեկավ ինքնակալութեանն արտաքին պաշտպանութեան, ինքնակալութեանն ամենից հարազատ և մոտիկ, այսպես սասած, մասնազիտութեան բնադավառում»<sup>2</sup> :

Ռուս-յապոնական պատերազմում կրած պարտութեանը ամենից առաջ հանդիսանում էր ինքնակալութեան նեխվածութեան արդյունք, դասակարգային ներքին հակասութեանների արդյունք, վոր քայքայում և խարխուլում էյին ցարիզմի հզորութեանը: Պարտութեանը պատերազմում — արդյունք էր յերկրի անտեսական, քաղաքական և կուլտուրական հետա-

<sup>1</sup> Ленин, Соч., т. VII, стр. 44, 45.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 45:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>1</sup> Ленин, Соч., т. VII, стр. 46.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 48:

մնացութեան, վոր նրան դատապարտել եր ցարական ինքնակալութիւնը: Ճորտատեր-կարլաճատերերի գերիշխանութեան բոլոր հետեանքներն ամենից սուր կերպով իրենց զգալ տվեցին պատերազմի մեջ, իմպերիալիստական յետասարդ գիշատիչի հետ հանդիպելիս: Վերջապես, պարտութիւնը պատերազմում հանդիսացավ այն բանի արդշունք, վոր ժողովրդական մասսաները խորապէս բացասական վերաբերմունք ցույց տվին պատերազմի զավթողական նպատակներին, վոր հետապնդում եր ռուսական ցարիզմը:

Լենինը մատնանշում ե Ռուսաստանի ռազմական կազմակերպութեան և նրա ամբողջ տնտեսական ու կուլտուրական կարգի միջև յեղած սերտ կապը, Ռուսաստանի ռազմական կրախի և քաղաքական կրիզիսի կապը:

Լենինը խստորեն քննադատում ե մենշևիկներին ու եսերների դիրքը պատերազմի հարցում և նրանց վերաբերմունքը ցարական բանակի պարտութեան փաստին: Լենինն ամենից առաջ պատասխանում ե եսերների կուսակցութեան որդան «Революционная Россия»-ին, վորը հարձակվել եր պատերազմի հարցում հեղափոխական դիրքի վրա կանգնած Գեդի և Հայնզմանի վրա: Գեդը և Հայնզմանը այդ նույն ժամանակ տեսնում եյին, վոր ցարական բանակի պարտութիւնը կարող ե հեղափոխական նշանակութիւն ունենալ:

«Առաջավոր յերկրի պատերազմը հետամնաց յերկրի դեմ այս անգամ ել, ինչպէս արդեն բազմիցս պատմութեան մեջ, հեղափոխական մեծ դեր խաղաց... գրում ե Լենինը.— Պրոլետարիատը թշնամի յե ամեն մի բուրժուազիայի և բուրժուական հասարակարգի ամեն տեսակի արտահայտութիւններին, բայց այդ թշնամութիւնը նրան չի փրկում բուրժուազիայի պատմականորեն պրոգրեսսիվ և ռեակցիոն ներկայացուցիչներին տարբերելու պարտավորութիւնից»<sup>1</sup>:

Մենշևիկյան «Искра»-ն ճիշտ այդպէս ել անուշադիր չթողեց Գեդին և Հայնզմանին, իսկ վոր գլխավորն ե՝ մենշևիկյան «Искра»-ն առաջ քաշեց «Հաշտութիւն ինչ դնով ել

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 48:  
32


լինի» լոգունգը: Այդ տեսակետը պաշտպանում եյին Դանը և Տրոցկին:

Պատասխանելով մենշևիկյան, ըստ ելութեան պաշտպանողական, կադետական, պացիֆիստական դատողութիւններին, Լենինը գրում եր.

«Վոչ: Ռուսական ազատութեան և սոցիալիզմի համար ռուսական (և համաշխարհային) պրոլետարիատի պայքարի գործը շատ ուժեղ կերպով կախված ե ինքնակալութեան ռազմական պարտութիւններից: Այդ գործը շատ շահեց ռազմական կրախից, վոր սարսափ ե ներշնչում յեւրոպական բոլոր կարգի պահպանիչներին: Հեղափոխական պրոլետարիատը պետք ե անդնդրում ազիտացիա մղի պատերազմի դեմ, այդ դեպքում միշտ հիշելով, վոր պատերազմները չեն վերացիլ, քանի դեռ մնում ե դասակարգային գերիշխանութիւնն առհասարակ: Խաղաղութեան մասին տափակ ֆրագմենտով à la Ժորես չես ողնի ճնշված դասակարգին, վորը պատասխանատու չե բուրժուական յերկու ազգութիւնների միջև մղված բուրժուական պատերազմի համար, վորն ամեն ինչ անում ե տապալելու համար ամեն մի բուրժուազիայի ընդհանրապէս, վորը գիտե ժողովրդական թշնամութիւնների անընդգրկելիութիւնը նաև կապիտալիստական «խաղաղ» շահագործման ժամանակ: Բայց, պայքարելով ազատ կոնկուրենցիայի դեմ, մենք չենք կարող մոռանալ նրա պրոգրեսսիվութիւնը կիսաճորտատիրական հասարակարգի համեմատութեամբ: Պայքարելով ամեն տեսակի պատերազմների և ամեն մի բուրժուազիայի դեմ, մենք խստորեն պետք ե մեր ազիտացիայի մեջ տարբերենք պրոգրեսսիվ բուրժուազիան ճորտատիրական ինքնակալութիւնից, մենք մշտապէս պետք ե նշենք պատմական պատերազմի հեղափոխական մեծ դերը, վորի ախամ մասնակիցն ե հանդիսանում ռուս բանվորը:

Վոչ թե ռուս ժողովուրդը, այլ ռուսական ինքնակալութիւնն ե սկսել գաղութային այդ պատերազմը, վորը վերածվեց հին և նոր բուրժուական աշխարհի պատերազմի: Վոչ թե ռուս ժողովուրդը, այլ ինքնակալութիւնը խայտա-

4  
977021



ապակ պարտութիւնն կրեց: Ռուս ժողովուրդը շահեց ինքնապաշտպան պարտութիւննից: Պորտ-Արտուրի կապիտուլացիան ցարիզմի կապիտուլացիայի նախերգանքն է»<sup>1</sup>:

Այսպիսով, Լենինը, — իսկ Լենինի դիրքն այն ժամանակ պաշտպանում էին կուսակցութեան բոլոր կողմի-տենները, — ուսուցանական պատերազմի հարցում կանգնած էր, հստակ արտահայտված՝ պարտվողական տեսակետի վրա: Լենինը տեսնում էր, վոր պատերազմը մոտեցնում է ցարական ինքնակալութեան վախճանը: Բայց Լենինը նմանապես տեսնում էր և այն, վոր ուսուսական հեղափոխու-թյունը, վորի մոտենալն արագացնում է պատերազմը, հանդիսանում է յեվրոպական հեղափոխութեան նախերգանքը: Հենց այս հանգամանքն էլ ցարական Ռուսաստանի ուղղա-կան փոխառութիւնների մեջ հարյուրավոր միլիոն ուղղի-ներ ներդրած արևմտա-յեվրոպական բուրժուազիային ստի-պեց շտապեցնել ցարին ու միկադոյին՝ վերջացնելու պատե-րազմը: Հեղափոխութեան նկատմամբ յեղած վախը իմպե-րիալիստներին ամենից ավելի դրդում էր ճնշում գործադրել ցարական կառավարութեան վրա շուտափույթ հաշտութիւն կնքելու նպատակով:

Իհարկէ, այստեղ ուրիշ հաշիվ էլ կար— ոգտվել Ռու-սաստանի թուլութիւննից Չինաստանի նոր բաժանման ժա-մանակ իր համար վորոշ ողուս ստանալու հաշիվ: Հայտ-նի յե, վոր պատերազմի ժամանակ գոյութիւն ունէր ան-գլո-ամերիկայան համաձայնութիւնն, ըստ վորի այդ յերկու յերկրները, ավելի շատ Անգլիան իսկ ավելի քիչ՝ Ամերի-կան, Յապոնիային ոժանդակութիւնն ցույց տվին: Առանձ-նապես քաղաքական, Փինանսական և ուղղա-տեսնիկական նշանակելի ողնութիւնն ցույց տվին անգլիական իմպերիա-լիստները:

Յարական բանակի պաշտպանութիւնն ուժեղացրեց գյու-ղացիների և բանվորների հեղափոխական շարժումն ընդդեմ ցարիզմի, դժգոհութիւնն առաջացրեց լիբերալ բուրժուա-

զիայի մեջ: Վերջինս սկսեց խոսել հեղափոխութեան մասին, նպատակ ունենալով ստիպելու ցարական կառավարութեանը զիջումներ անելու իրեն և սահմանադրութիւնն տալու: Լի-բերալ բուրժուազիայի մեջ դժգոհութիւնն է առաջանում ինքնակալութեան, նրա՝ ամեն մի ոպողիցիոն շարժում ճնշելու քաղաքականութեան դեմ:

Նշելով լիբերալ բուրժուազիայի մեջ յեղած այդ խմո-բումը, Լենինը գրում էր, վոր «հեղափոխութեանն սկսում են հալատալ ամենաանհավատները: Հեղափոխութեան նկատմամբ ընդհանուր հավատը արդեն հեղափոխութեան սկիզբն է»<sup>1</sup>:

\* \* \*

✓ Պորտ-Արտուրի անկումից հետո նոր դորահավաք սկսու-վեց: Յարը ինչ էլ վոր լինի ուղում էր ապացուցել, վոր ինքն ընդունակ է հաղթելու յապոնական իմպերիալիզմին: Բացի դրանից, հաղթանակը ցարական Ռուսաստանում հար-կավոր էր նոր փոխառութիւններ ստանալու համար:

✕ Չորահավաքի կապակցութեամբ բոլորէիկայան կուսակցա-կան կոմիտեները ծավալեցին մասսայական լայն կամպա-նիա: Լույս էլին ընծայվում թուուցիկներ: Դրանցից հետա-քրքիր են ՌՄԴԲԿ Բազվի կոմիտեի կոչերը, վորին ղեկա-վարում էր այն ժամանակ ընկեր Ստալինը: «Ճշմարտու-թիւնը պատերազմի մասին (Կովկասի առաջիկա գորահա-վաքի առթիւ)» թուուցիկի մեջ Բազվի կոմիտեն գրում էր.

«Պորտ-Արտուրն ընկա՛վ:

Դեռ յերեկ կառավարութիւնը մոլորեցնում էր 100-մի-լիոնանոց ժողովրդին. Ստեսսելը հերո՛ս է: Արտուրում մթեր-քի պաշարը կրավականացնի դեռևս կես տարի, գորքի վո-զին հիանալի յե: Իսկ յապոնացիները մեռնում են, ինչպես ճամններ:

Յեվ այդ բոլորն ստոր կեղծիք էր: Միայն այժմ մենք իմացանք իսկական ճշմարտութիւնը: Պատերազմը հանկար-

<sup>1</sup> Ленин, Соч., т. VII, стр. 49.

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 50:

ծակիլի բերեց ցարական կառավարութեանը: Պորտ-Արտուրում չկային համապատասխան քանակի հրանոթներ, ուստի մամթերք, պաշարն անբավարար էր, սովը և ցինդան մոլեղում էյին զինվորներին մեջ: Պորտ-Արտուրի 50.000 պաշտպանողներէց 25.000-ը սպանվեցին, կենդանի մնացած 25.000-էց 14.000-ը վիրավոր դուրս յեկավ և 10.000-ը ցինդալով հիվանդ: Յեվ վո՛չ մի առողջ մարդ:

Այսպէ՛ս և կառավարութեան ճշմարտասիրութեանը:

Մտածեցե՛ք, ընկերներ. 50.000 ընտիր մարդիկ տանջամահ և հաշմանդամ են արված, իսկ մենք, նրանց հարազատներն ու մերձավորները, այդ ամենն այժմ միայն իմացանք, յերբ այդ տառապալներէց շատերին պետք չեն վոչ մեր արցունքները և վոչ էլ սիրտանքները:

Դեռ ալելին. ուստի ժողովուրդը մինչև հիմա չգիտէ, թէ ինչ պատճառներով սկսվեց պատերազմը»:

Կոչը նշում է, վոր 11 ամիսների ընթացքում պատերազմի վրա ծախսվել է ավելի քան 500 միլ. ուսուրի, բացի խորտակված նավատորմի և յապոնացիների ձեռքն անցած Չինարևելյան յերկաթուղու արժեքից, Պորտ-Արտուրից և Դալնի նավահանգստից: Կոչի մեջ այնուհետև մատնանշվում է, վոր նորից 600 միլ. ուսուրի յե հատկացված պատերազմին, բարձր տոկոսներով նոր փոխառութեաններ են վերցված, ուղմական նոր շրջաններ են մորելիզացիայի յենթարկվում և գորահավաքի պատրաստութեան և կատարվում Կովկասում: Կոչը վերջանում է հրավեր կարգալով բողոքելու այդ սարսափելի սպանդանոցի դեմ և պահանջելու Մահմանազիր ժողովի հրավիրում:

Դրանից յերկու ամիս առաջ ՌՄԴԻԿ Կովկասյան միութեան Բաթումի կոմիտեն պատերազմի կապակցութեամբ բաց թողեց «Չինվորներ» կոչը: Այդ կոչի մեջ զինվորներին բացատրվում էյին այն պատճառները, վորոնցով ցարն սկսել է պատերազմը: «Նրան հարկավոր էր սկսել այդ պատերազմը, վորպեսզի ժողովրդի ուշադրութեանը հեռացներ Ռուսաստանի ներքին գործերից, վորպեսզի թնդանոթների վորոտով և հաղթանակների փայլով խեղդեր ժողովրդի հեծե-

ծանքն ու հառաչանքը, ժողովուրդը, վորն էր դատան թշնամու՝ ցարի և ցարական ուղիղչնիկների դեմ մարտի յե նետվում: Նրան հարկավոր է պատերազմը, վորպեսզի հնարավորութեան տա իր պալատականներին ու զենեւալներին հարստանալու պետական կապալներով և ստանալու նոր շքանշաններ ու աստիճաններ: Յեվ դրա համար ուստի զինվորները պետք է ծածկեն Մանջուրիան իրենց զիակների կույտերով:

Проклятие ему, королю всех счастливых,  
Не любит он нас, бедняков терпеливых,  
Не жаль ему нас \*...

Չինվորներ՝: Լրջորեն մտածեցեք այս ամբողջ ասվածի վրա և ասացեք, թէ ո՞ւր գնալ, ո՞ւմ համար կույել. թագավորի հետ, բայց հայրենիքի դե՞մ, թէ՞ հայրենիքի համար՝ ցարի և նրա կառավարութեան դեմ:

Կորչե՛ խայտառակ պատերազմը:

Կորչե՛ն հայրենիքի թշնամիները—ցարը և նրա գործակիցները:

Կեցցե՛ ազատազրված Ռուսաստանը»:

Պատերազմի հենց սկզբին, 1904 թ. մարտի 15-ին, ՌՄԴԻԿ Բագվի կոմիտեն մի թուուցիկ բաց թողեց, վորի մեջ ասված էր, թէ յապոնացիները հաղթում են գլխավորապես այն պատճառով, վոր նրանց մոտ սահմանադրական հասարակակարգ է, վոր «յապոնացիները մեզ խփում են լուսավորութեամբ»: Թուուցիկը վերջանում էր կոչ անելով պալքարել ընդդեմ հայրենասիրական մանիֆեստացիաներին մասնակցելու և ազխտացիա մղել պատերազմն սկսած ինքնակալութեան դեմ:

«Ընկե՛ր բանվորներ: Բոլորին հետ պահեցեք այն մանիֆեստացիաներին մասնակցելուց, վոր կազմակերպում է

\* Անեծք նրան, բոլոր բախտավորների թագավորին.  
Չի սիրում նա մեզ, համբերատար չքավորներին,  
Չի խղճում նա մեզ..

ուսուսական վիստիկանութունը, բացատրեցեք բոլորին և  
ամեն մեկին, թե ով է սկսել պատերազմը և ում շահերի  
համար է այն մղվում: Թող բոլորը հասկանան, վոր Կորեա-  
յում և Մանջուրիայում ուսուսական արյունը իր շահերի հա-  
մար թափում է ինքնակալական կառավարութունը, ինչպես  
վոր նա այդ արյունը թափում էր Բաթումի և Բալխանիի,  
Պեստերբուրգի ու Յարոսլավի, Ջլատոուստի ու Ռոստովի փո-  
ղոցներում»:

Միբերի սոցիալ-դեմոկրատական միության մեջ այն  
ժամանակ աշխատում էին մի ամբողջ շարք ակաճավոր  
բուլչեիկներ. Տոմսկում՝ Սերգեյ Միրոնովիչ Կիրովը, Ռոս-  
կում՝ Վալերիան Վլադիմիրովիչ Կույբեշևը: Միբերի վրա-  
յով էին գնում գործերի ելելոնները Հեռավոր Արևելք: Մի-  
բերի սոցիալ-դեմոկրատական միությունը հսկայական կազ-  
մակերպական ու ազխտացիոն աշխատանք էր կատարում  
ուսուսական պատերազմի ժամանակ: Հեռավոր Արևելք  
ուղևորվող բանակների զինվորներին ուղղած թուղցիկներ  
ամենից շատ բաց թողին կուսակցական այն կոմիտեները,  
վորոնք միայնոված էին Միբերի սոցիալ-դեմոկրատական  
միության մեջ, այն է՝ Տոմսկի, Ռոսկի, Կրասնոյարսկի,  
Իրկուտսկի, Ջրասյի կոմիտեները:

Դեռ 1903 թ. ամառը, գործերը դեպի Հեռավոր Արևելք  
չարժվելու ժամանակ, Միբերի սոցիալ-դեմոկրատական մի-  
ությունը թուղցիկ բաց թողեց՝ ուղղված «բոլոր գործերին»,  
վորի մեջ շարադրված էին Ռուսաստանում տեղի ունեցող  
հեղափոխական իրադարձութունները: Պատերազմից կես  
տարի առաջ լույս տեսած այդ թուղցիկի մեջ զինվորներին  
արդեն բացատրվում էին ցարի սարքած ավանտյուրայի  
նպատակները:

«Զինվոր՝ յեղբայրներ, — կարդում ենք այդ պրոկլամա-  
ցիայի մեջ: — Ահա և մեզ հիմա քշում են Հեռավոր Միբեր,  
դեպի Արևելք: Ինչո՞ւ: Ո՞ւմ պաշտպանելու, ո՞ւմնից պաշտ-  
պանվելու: Թագավորին: Բայց ո՞վ է հարձակվել նրա  
վրա: Հայրենի՞քը: Նույնպես վոչ: Ռուսական կառավարու-  
թյունն ինքն է հարձակվում: Մանջուրիան — ահա համեղ

պատա՛ռ ցարական կառավարության համար: Յարի և նրա  
ծառանների համար քիչ է ուսու ժողովրդից ծծած արյունը,  
աշխատանքային քրտինքը: Նրանք շատ ազահ են, ավելի ու-  
ավելի շատ են ուղում նրանք:

Իրենց համար խաղաղ ապրում էյին հարևան չինացիներ-  
ը: Յարական կառավարությունը նկատեց նրանց թուլու-  
թյունը, տեսավ ոգուտը և դայթակղվեց: Չորք ուղար-  
կեց... մորթեց ու սպանեց հազարավոր խաղաղ չինացիներ-  
ը... Դրավեց ամբողջ մի յերկիր... Բայց այստեղ մյուս  
յերկրների կառավարությունները նախանձեցին ուսուսականին  
և վորոչեցին նրանից խել կողոպտածի մի կտորը:

Ահա թե ինչու հիմա, վազոնների մեջ լցնելով, մեզ  
հապճեպ քշում են Արևելք...»:

1904 թ. փետրվարին Միբերի միությունը բաց է թող-  
նում մի պրոկլամացիա, վորի մեջ հայտարարում է. «Մեզ,  
մի զույգ միանուս ձեռքերից բացի վոչինչ չունեցող պրոլե-  
տարներին, վոչինչ չի կապում հին կյանքի ձևերին. մենք  
վոչինչ չունենք, չկա և չի կարող լինել մեզ մոտ նաև այն  
հայրենիքը, վորի համար մենք ստիպված լինենք կուլել:  
Մեզ համար պատրիոտիզմը վատ հիվանդություն է, վոր  
ուղում են իրենցից մեզ պատվաստել մեր թշնամիները:

Մեր թշնամին — բոլոր ժողովուրդների և բոլոր յերկր-  
ների բուրժուազիան է:

Մեր պայքարը — ամբողջ աշխարհի բոլոր լեզուների և  
ցեղերի, բոլոր պրոլետարների ընկերական պայքարն է բո-  
լոր ժողովուրդների բուրժուազիայի դեմ: «Պրոլետարներ՝  
բոլոր յերկրների, միացե՛ք» — ահա մեր մարտական կանչը»:

Պրոկլամացիան վերջանում է պատերազմի դեմ հեղափո-  
խական ցույցերի կոչով.

«Ինչ չարտեցեք ծախված տերտերներին, վորոնք խաչք  
ձեռքներին ժողովրդին ուղարկում են մեռնելու ցարական  
կապրիզի համար:

Վնդեցեք իրենց ստրկամիտ զգացումներն արտահայտող  
ստորաքարչ բուրժուաներին: Զինվորներին ուղեկցեք

ցուցցերով և կարմիր դրոշակներով... Կեցցե համառուսա-տանյան ժողովրդական հանրապետութիւնը...»:

«Ինչու համար պետք է մեռնեն ոուս զինվորները» թուուցիկի մեջ Սիբիրի սոցիալ-դեմոկրատական միութիւնը բացատրում էր, վոր Հեռավոր Արեւելքում ոուս զինվորը մեռնում է միայն ցարի փառքի համար, ցարական դահի համար, վորը ծաղկում է ժողովրդական թշվառութիւնների հողի վրա, կառուցված է մարդկային վտակների վրա:

«Զինվորներին», «40 մարդ, 8 ձի» թուուցիկների մեջ ՌՄԴԲԿ Սիբիրի սոցիալ-դեմոկրատական կոմիտեն կոչ է անում զինվորներին հետ դառնալ Ռուսաստան և իրենց գեներ դարձնել ցարի դեմ:

Զինվորներին ուղղված «Յարի պատիվը և ժողովրդի պատիվը» թուուցիկի մեջ ՌՄԴԲԿ Սիբիրի միութենական կոմիտեն Պորտ-Արտուրի անկման կապակցութեամբ կոչ է անում ընդհանուր գործադուլի:

«Վո՛չ, բավական է, զինվորնե՛ր, բավական է, յեղբայրներ: Նայեցեք բանվորներին: Յեթե հարկ լինի մեռնել, ապա մեռնել ժողովրդի համար, և վոչ թե ցարի, ժողովրդին տանջողի և նրա թշնամու համար: Դե՛ ուրս յեկեք վագոններից, զինվորնե՛ր. կանգնեցրե՛ք զնայքները: Ամենուրեք—Սիբիրի և Զարայկալի յերկաթուղու 5.000 վերստ ամբողջ յերկարութեամբ մենք բանվորներին պիտի ասենք. դադարեցրե՛ք աշխատանքը, դո՛ւրս յեկեք արհեստանոցներից, հրաժարվեցե՛ք գործերը տեղափոխելուց, հրաժարվեցե՛ք ձեր յեղբայրներին անխուսափելի մահվան տանելուց, ընդհանուր գործադուլ հայտարարեցե՛ք»:

Յեւ յերբ կանգ կառնեն զնայքները, համարձակորեն, զինվորնե՛ր, վագեցեք բանվորների մոտ և նրանց հետ միասին հարձակվեցեք ցարական կառավարութեան վրա, ցարական չինովնիկների վրա, ձեր հրամանատարութեան վրա»<sup>1</sup>:

<sup>1</sup> Հետագայում, յերբ կառավարութիւնն սկսեց զինվորներին գրգռել բանվորներին դեմ այն բանի համար, վոր բանվորները չեն ուզում զինվորներին տեղափոխել, բանվորները հայտարարեցին, վոր զինվորներին կտեղափոխեն, բայց ուրիշ տեղափոխումները կդադարեցնեն:

Թուուցիկը վերջանում է հետեյալ լուրնազով. «Դե՛, դեպի պայքար, զինվորներ, դեպի պայքար, բանվորներ: Դուրս յեկեք վագոններից: Կանգնեցրեք զնայքները»:

Նույնպիսի թուուցիկ բաց թողնվեց՝ ուղղված Սիբիրի և Զարայկալի յերկաթուղային բոլոր բանվորներին հենց նույնպիսի լուրնազով. «Միանգամից թողեք աշխատանքը, համարձակորեն դուրս յեկեք արհեստանոցներից, կանգնեցրեք զնայքները»:

Տոմսկում ՌՄԴԲԿ կուսակցական կոմիտեյին գլխավորում էր Ս. Մ. Կիրովը: «Տոմսկ քաղաքի բոլոր բանվորներին» թուուցիկի մեջ, վոր բաց էր թողնված մայիսի 1-ի որովա առթիվ, Տոմսկի կոմիտեն կոչ է անում ապրիլի 18-ին փողոց յեմել և մատնանշում է, վոր ոուս բանվորը յապոնացիներին հետ չէ վոր պետք է կովի:

«Վո՛չ: Յեթե պիտի կովել—ապա պետք է կովել ցարի և նրա կառավարութեան դեմ, վորը քայքայում, խարում և սպանում է իր ժողովրդին: Յեւ թող»:

«Կորչի՛ ցարական կառավարութիւնը: Կորչի՛ կողոպտիչ պատերազմը: Կեցցե՛ սոցիալիզմը»—հուժկու կանչը տարածվի Ռուսաստանի բոլոր անկյուններում, արթնացնի քնածներին, բորբոքի պայքարողներին:

Ապրիլի 18-ին դեպի փողոց: Կեցցե՛ պատերազմը ցարի դեմ»:

1904 թ. փետրվարին ՌՄԴԲԿ Պետերբուրգի կոմիտեն թուուցիկ է բաց թողնում՝ ուղղված «Զինվորներին»<sup>1</sup>: Թուուցիկի մեջ նշարգարանվում էր, թե ինչի համար է պատերազմ մղվում Հեռավոր Արեւելքում, և նշվում էր, վոր Մանջուրիայի միացումը Ռուսաստանին ե՛լ ավելի կուժեղացնի բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների ճնշումը, վորովհետեւ նոր ծայրամասերի ոսպնական պահպանութեան համար կպահանջվի նորանոր միլիոնների ծախս, վորի համար միջոցները, հարկավ, կքամվեն հենց նույն այդ հյուսիսում ժողովրդական գրպանից քաղցի և ավերման զնով: Միակ մար-

<sup>1</sup> Կուսպատի արխիվ, թուուցիկ № 5502:

դիկ, ովքեր շահագրգռված են հրեշավոր չափերով հսկայական ուսաստանյան իմպերիային նոր տերիտորիաներ միացնելով,—չրանք ժողովրդական աշխատանքը շահագործողներն են,—կապիտալիստները: Նրանց համար Մանջուրիան իրենց ապրանքների վաճառահաման, նորանոր վաստակների նոր շուկա յե: Մանջուրական հարցում շահագրգռված է նաև ցարական կառավարութունը, վորովհետև, նախ, նրա իշխանության ամեն մի ընդարձակում կրարձրացնի նրա հեղինակութունը հարևան պետութունների աչքում, իսկ, ապա նրա համար ել խորթ չեն առևտրական նկատառումները: Հենց Յալու գետի ափին բարձրանում են կորեական անտառները շահագործող ակցիոներական ընկերության գործարանների խողովակները. այդ ընկերության գլխավոր փայտերերն են ինքը միապետը, նրա հորյեղբայր Ալեքսանդր Միխայիլովիչը և նորին մեծության ստաստ-քարտուղար պարոն Բեգորբազովը—. . . Ահա թե ում շահերի համար է վիճակված մեզանից շատերին ցած դնել իրենց գլուխը: Հայրենիքի բարորությունը, ժողովրդի բարորությունը, ձեր յեղբայրների, հայրերի, մայրերի բարորությունը սրա հետ վոչ մի կապ չունեն»:

Այդ պրոկլամացիան վերջանում է կոչ անելով միանալու ապստամբ ժողովրդին, յերբ նրա կրծքից հնչի «կորչի՛ ինքնակալությունը» մարտական կանչը:

1904 թ. նոյեմբերին բաց թողած պրոկլամացիայի մեջ ՌՄԴԻԿ Պետերբուրգի կոմիտեն դիմում եր Որուխովո գործարանի պահեստի զինվորներին, կոչ անելով պատրաստվել հեղափոխությանը, այն մոմենտին, յերբ կառավարության տված զենքը նրանք կզարձեն ցարիցմի դեմ:

«Ձեր տեղը,—կարդում ենք մենք պրոկլամացիայում,—վոչ թե հանցագործ, ժողովրդի արյունով ու արտասուքներով վողողված ինքնակալության պաշտպանների շարքերումն է, վորը խեղդում է բոլորին և ամեն ինչ յերկրում, այլ նրա դեմ պայքարող բանվոր դասակարգի շարքերում: Հիմա, յերբ նա բռնի ուժով ժողովրդական ուժերի գորահավաք է կատարում Յապոնիայի դեմ պատերազմելու համար, Ռու-

սաստանում տեղի յե ունենում մի ուրիշ մեծ, ազատ գորահավաք—հեղափոխական ուժերի գորահավաք քաղաքական ազատություն նվաճելու համար: Հեղափոխական այդ բանակի շարքերն է ձեզ կանչում, ընկեր պահեստայիններ, Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը: Պատրաստ յեղեք այն օրվան, յերբ կսկսվի բանվոր դասակարգի և ժողովրդի պայքարի վերջին գործողությունն ինքնակալական կառավարության դեմ յերկրի ազատագրության համար, այն ժամանակ վերցրեք հրամանատարության կողմից ձեզ համար պատրաստած զենքերը և հանդես յեկեք վորպես ժողովրդի վառավոր պաշտպաններ, ուսական հեղափոխության պանծալի հերոսներ: Այդ օրերը մոտ են, ընկեր-պահեստայիններ,—պատրաստ յեղեք նրանց: Հեռավոր Արևելքում վոճրագործ ինքնակալության շահերի համար պայքարելիս գտած մահը դժբախտ, վողորմելի մահ է, իսկ Պետերբուրգի փողոցներում, կարմիր դրոշակների տակ, իշխող ճնշումից ու կամայականութունից հայրենիքի ազատագրման համար պայքարելիս գտած մահը՝ մեծ ու պատվավոր մահ է:

Պատրաստ յեղեք նույնպիսի արագությամբ և վճռակալությամբ կանգնելու ուսական հեղափոխության մարտիկների շարքերում, ինչպես վերջերս կատարեցին հրամանատարության կողմից ցույցը ցրելու համար ուղարկված՝ Սեվաստոպոլի նավաստիները, նրանք իրենք կանգնեցին ցուցարարների շարքերում և հրաձգություն սկսեցին իրենց վրա ուղարկված զինվորների հետ»:

ՌՄԴԻԿ Յեկատերինոպոլի կոմիտեն «Յեկատերինոպոլի բոլոր բանվորներին»<sup>1</sup> ուղղած թուղթիկի մեջ, նկարագրելով Հեռավոր Արևելքի դեպքերը, պարզաբանում է, թե ինչի համար է ցարական կառավարությունը վարում իմպերիալիստական, զավթողական քաղաքականություն, և նշում է, վոր թե՛ յապոնական և թե՛ ուսական բանվորների շահերը միատեսակ են:

<sup>1</sup> Կուսպատի արխիվ, պրոկլամացիա № 6978:

«Այդ շահերը սոցիալիզմի համար, շահագործողական հասարակակարգի վոչնչացման համար աղատորեն պայքարելու մեջ են, այն հասարակակարգի, վորի ժամանակ միայն հնարավոր են ժողովուրդների պատերազմները պարզիտկապիտալիստների շայկայի ուղտի համար: Այդ պատերազմն սկսելով, ինքնակալութունը դադանի հույս ուներ հեռացնել ժողովրդի ուշադրութունն իր ազատագրության համար պայքարելուց և դրանով հետաձգել իր անխուսափելի կործանումը»:

\* \* \*

Կարելի չէր բերել ՌՍԴԲԿ կուսակցական այլ կոմիտեների տանյակ թուղիկները, վորոնք վկայում են ազդեցիտն և պրոպագանդիստական այն վիթխարի աշխատանքի մասին, վոր այն ժամանակ կատարում էր հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան: Թուղիկների մեջ բանվորներին, գյուղացիներին, զինվորներին և բոլոր աշխատավորներին պարզաբանվում էր ցարիզմի սկսած պատերազմի հանցադործութունը, նրա գավթողական նպատակները: Թուղիկները զինվորներին կոչ էյին անում պայքարել այդ պատերազմի դեմ բանվոր դասակարգի հետ ձեռք ձեռքի տված:

«Ժողովրդական մասսաները այդ պատերազմը չէյին ուզում և գիտակցում էյին նրա վնասակարութունը Ռուսաստանի համար: Ժողովուրդը թանգ էր վճարում ցարական Ռուսաստանի հետամնացության համար»<sup>1</sup>: Ռուս-յապոնական պատերազմը պոպուլյար չէր, այն սարքել էր ցարական կառավարութունը ժողովրդական մասսաների ուշադրութունը հեղափոխութունից հեռացնելու նպատակով: Բայց ցարական կառավարութունը չարաչար սխալվեց. պատերազմը արագացրեց հեղափոխութունը, պատերազմը այն դարձրեց անխուսափելի:

1905 թ. փետրվարի սկզբին Լենինը «Առաջին դասերը»

<sup>1</sup> «Համկ(բ)ի պատմութուն», համառոտ դասընթաց, Քաղհրատ, 1938 թ, հայերեն, էջ 75:

հողվածում մատնանշում էր, վոր ցարական կառավարութունը, տեսնելով հեղափոխական փոթորիկի յերկրորդ ալիքի անխուսափելիութունը, վործում է հասարակական ուշադրութունը հեռացնել ուղղման նորութուններով, հրամայելով Կուրուպատիկներն հունվարին նոր հարձակում սկսելու: Ռազմական տեսակետից այդ անմխտ հարձակումը վերջացավ ցարական բանակի նոր լուրջ պարտությամբ: Ոտարերկրյա մամուլում սկսեցին հաղորդագրութուններ լույս տեսնել այն մասին, թե մեծ իշխանները կուսակցութունը, տեսնելով, թե ինչպիսի վտանգ է ներկայացնում պատերազմը ինքնակալության համար, ուզում է վորքան կարելի յե շուտ հաշտվել Յապոնիայի հետ: Բայց յապոնական իմպերիալիզմը չէր շտապում հաշտութուն կնքել:

Պորա-Արտուրի դրամումից հետո յապոնական կառավարութունը տեսավ ցարիզմի անընդունակութունը՝ դիմադրելու, ուստի և աշխատում էր վորքան հնարավոր է ավելի լրիվ ավարտել ցարական Ռուսաստանի ջախջախումը:

Պատերազմը վարելու համար ցարական կառավարությանը նոր փոխառութուններ էյին հարկավոր, իսկ դրանք ստանալն ավելի ու ավելի դժվար էր դառնում: Լենինն իր «Յեվրոպական կապիտալը և ինքնակալութունը» հողվածում նշում է Փրանսական և անգլիական բորսաների փոփոխված վերաբերմունքը դեպի ցարական Ռուսաստանի փոխառութունները: Նախ, Յապոնիայի դեմ մղված պատերազմը խախտեց ցարիզմի վարկը, ցույց տալով նրա ուղղմական թուլութունը. յերկրորդ, բուրժուազիան կանգնած էր ցարիզմի կառավարական ամբողջ սիստեմի լիակատար կրախի վտանգի առաջ. յերրորդ,—վոր հատկապես կարևոր էր,—յեվրոպական բուրժուազիան ամենից շատ վախենում էր Ռուսաստանում սկսված հեղափոխութունից և մյուս յերկրներում նրա տարածվելուց:

«Յեվրոպական կապիտալը,—նշում էր Լենինը,—դրազվում է խաղաղության սպեկուլացիայով: Բուրժուազիան վոչ միայն Ռուսաստանում, այլև Յեվրոպայում սկսել է հասկանալ պատերազմի կապը հեղափոխության հետ, սկսել

ե վախենալ ցարիզմի դեմ ուղղված իսկական ժողովրդական  
և հաղթական շարժումից: Բուրժուազիան ուզում է հասա-  
րակուլթյան շահագործման վրա հիմնված «հասարակար-  
գը» պահպանել ծայրահեղ ցնցումներից, ուզում է պահպա-  
նել ուսական միապետութունը սահմանադրական, կամ  
իր-սահմանադրական, միապետության ձևով, և դրա հա-  
մար էլ բուրժուազիան սպեկուլացիայի յե յենթարկում խա-  
ղաղութունը հողուտ հակապրոլետարական և անտիհեղա-  
փոխական շահերի»<sup>1</sup>:

Սակայն պատերազմի և խաղաղության հարցերը մարք-  
սիստները չեն կարող դնել այնպես, ինչպես դնում է բուր-  
ժուազիան: «Պրոլետարիատը պայքարում է և մշտապես ան-  
շեղորեն պիտի պայքարի պատերազմի դեմ, չմոռանալով, սա-  
կայն, վոչ մի րոպե, վոր պատերազմների վոչնչացումը  
հնարավոր է միայն լիովին վոչնչացնելով հասարակության  
բաժանումը դասակարգերի, վոր դասակարգային տիրապե-  
տութունը պահպանվելու դեպքում պատերազմը չի կարելի  
զնահատել միայն դեմոկրատական սենտիմենտալ տեսակե-  
տից, վոր շահագործող ազգերի միջև պատերազմ լինելու  
դեպքում անհրաժեշտ է տարբերել այս կամ այն ազգի  
պրոգրեսիվ և ուսակցիոն բուրժուազիայի դերը»<sup>2</sup>:

Մենչևիկները, ինչպես հայտնի յե, առաջ քաշեցին  
«Հաշտութուն ինչ գնով էլ լինի» լոզունգը: Նրանք սպեկու-  
լացիայի եյին յենթարկում յապոնական բուրժուազիայի  
հաղթելու վտանգը: Լենինը նշում է, վոր «թե՛ մեկ և թե՛  
մյուս դատողութուններն արժանի եյին միայն բուրժուա-  
կան դեմոկրատին, վորը քաղաքական հարցերը դնում է  
սենտիմենտալ հողի վրա: Հիմա իրականութունը ցույց  
տվեց, վոր «Հաշտութուն ինչ գնով էլ լինի» լոզունգը  
դարձել է յեվրոպական բիրժեվիկների և ուսակցիոնների  
լոզունգ»<sup>3</sup>:

Լենինի կողմից մենչևիկների տեսակետի քննադատու-  
թյունն ունեցավ իր ներգործութունը: Մենչևիկները սկսե-  
ցին յելք փնտոել, նահանջել իրենց լոզունգից, և այդ հանդա-  
մանը Լենինը նշում է իր հոգվածի մեջ:

«Ռեակցիոն բուրժուազիայի նոր կերպարանքը ցույց  
տվող դեպքերը աչքի եյին ընկնում այնքան վառ կերպով,  
վոր այժմ նաև «Искра»-ն սկսեց հասկանալ իր սխալը: Յեթե  
«Вперед»-ի № 2-ում տպված մեր հոգվածի համար նա  
բարկացկոտ «գայրահաջում եր» № 83-ում, ապա հիմա  
№ 90-ում մենք դոհունակությամբ կարդում ենք (առաջնոր-  
դողը), «Ձի կարելի միայն հաշտութուն պահանջել, վորով-  
հետև ինքնակալության պահպանության դեպքում հաշտու-  
թյունը կնշանակի յերկրի կործանում»: Ահա դա այդպես ե-  
չի կարելի պահանջել միայն հաշտութուն, վորովհետև ցա-  
րական հաշտութունը լայլ չէ (իսկ յերբեմն վատթար է)  
ցարական պատերազմից. չի կարելի դնել «Հաշտութուն ինչ  
գնով էլ լինի» լոզունգը, այլ միայն հաշտութուն ինքնա-  
կալության անկման հետ միասին, հաշտութուն, վորը  
կինքի ազատազրված ժողովուրդը, ազատ սահմանադիր ժո-  
ղովը, այսինքն վոչ թե հաշտութուն վորևե գնով, այլ բա-  
ցառապես արսուլուտիզմի տապալման գնով: Հուսով ենք,  
վոր, հասկանալով այդ, «Искра»-ն կհասկանա նաև իր  
ազնվաբարո տիրադների անտեղի լինելն ընդդեմ յապոնա-  
կան բուրժուազիայի հաղթանակը սպեկուլացիայի յենթար-  
կելու»<sup>1</sup>:

Հետաքրքրական է, վոր ցարական կառավարութունն  
անգլիական և ուրիշ բիրժեվիկներին իր վճարունակութունն  
ապացուցելու համար «Թայմզ» լրագրի խմբագրությանը  
հեռագրով խնդրեց իր ներկայացուցիչն ուղարկել Պետեր-  
բուրգ և անձամբ ստուգել վոսկու պաշարը: Սակայն «Թայ-  
մզի» խմբագրութունն այդ առաջարկութունը չընդունեց և  
կասկած հայտնեց, թե արդյո՞ք վոսկու այդպիսի պաշար դո-  
յություն ունի: Յե՛վ անգլիական և՛ Ֆրանսական կապիտա-

<sup>1</sup> Ленин, Соч., т. VIII, стр. 175.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 176:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 176—177

լիսաները նշեցին, վոր Ռուսաստանն արդեն վաղուց է, ինչ փոխ առած փողերով է ապրում, վոր նրա բյուջեն տարեց-տարի փակվում է խոշոր դեֆիցիտով և վոր պատերազմող Ռուսաստանին փոխառություններ տալը դառնում է անշահավետ և ռիսկով գործ: Ֆրանսական և գերմանական կապիտալիստները լուրջ ճնշում էին գործ դնում ցարական կառավարության վրա, պնդելով, վոր պատերազմը դադարեցվի և հաշտություն կնքվի: Առանձնապես այդ ուղղությամբ վճռաբար էին գործում «բարեկամները»—Ֆրանսացիք: Նրանք նաև պնդում էին, վոր ցարական Ռուսաստանի ռազմական ու վտտիկական ամբողջ ապարատն անցնի հեղափոխության դեմ մղվող պայքարին: Մուկղենյան պարտությունից անմիջապես հետո ցարական կառավարության հետ չտեսնված սկանդալ պատահեց: Պետերբուրգում ներկա յեր Ֆրանսական բանկիրների գելեգացիան, վորոնց հետ Ֆինանսների մինիստր կոկովցեվը բանակցություններ էր վարում նոր փոխառություն կնքելու մասին: Փոխառության պայմաններն արդեն համաձայնեցված էին և պետք է ստորագրվեին 1905 թ. մարտի 1-ին: Սակայն նշանակված ժամին բանկիրները չներկայացան, զրպիւր հայտնելով, վոր կառավարությունն արդելել է իրենց ստորագրել պայմանագիրը, և մեկնեցին Փարիզ: «Բարեկամները» ցարին մատնանշում էին հաշտություն կնքելու անհրաժեշտությունը, վորից հետո վերստին վարկեր բաց կթողնվեն:

Յեվրոպական բուրժուազիան շահագրգռված էր ռուսական ինքնակալությանն ոժանդակելով, վորովհետև այդ նշանակում էր պահպանել Ռուսաստանի հեռամնացությունը, պահպանել համեմատաբար թույլ կոնկուրենտին համաշխարհային շուկայում: Լենինը «Յուզելու» Ֆրանս-ռուսական սովորությունները» հոդվածի մեջ նշում է յեվրոպական բուրժուազիայի շահագրգռվածությունը՝ պահպանելու ինքնակալությունն իր ծախու բյուրոկրատական ապարատով, վորն ողնում է այդ բուրժուազիային, վոչ առանց շահի իրեն համար, ռազմական մատակարարումներից և այլ արդյունաբերական պատվերներից շահ վերցնել: «Հասկանա-

լի, յե, թե ինչու ռուս չինովնիկերը հրաժարվելով հրաժարվում են սահմանադրությունից, վորն սպառնում է հրապարակային կոնտրոլ սահմանել ազմինստրացիայի վրա: Այս որինակով կարելի յե պատկերացնել իրեն, թե ինչպիսի փողեր է «վաստակում» ռուսական բյուրոկրատիան ռուս-յապոնական պատերազմից,—ինչպիսի գումարներ մտան Ռուսաստանի ովկիանոսյան նավերը գերմանացիներին վաճառելու ժամանակ: Ժողովրդի թշվառությունը վոսկե հատակ և կապալառուների և ծախված չինովնիկների համար»<sup>1</sup>:

Պետք է նկատի ունենալ, վոր յապոնական բանակի արագ հաղթանակը ցարական կառավարության բանակի նկատմամբ, վոր հնարավորություն տվեց Յապոնիային ընդարձակելու իր եքսպանսիան Արևելքում, այդ ժամանակ արդեն սկսեց անհանդստացնել ամերիկական կապիտալիստներին: Դրա համար էլ ամերիկական կառավարությունը ձգտում էր նույնպես արագացնել հաշտության բանակցությունները և այդ բանակցությունների ժամանակ ապահովել իր սեփական շահերը: Իայց ռեալ կերպով հաշտության բանակցությունների հարցը լուծվեց միայն Յուսիմայից հետո:

\* \* \*

Յեթե Լյաոյանի, Շախեյի մոտ կրած պարտությունը, Պորտ-Արտուրի հանձնումը և Մուկղենի մոտ կրած Չախլախումն ամենալուրջ պարտության յենթարկեցին ցարական բանակին, իսկ խաղաղովկիանոսյան նավատորմի խորտակումը զրկեց ցարական Ռուսաստանին պատերազմի ընթացքի վրա ծովում վորեք ազդեցություն ունենալու հնարավորությունից, ապա ցարական Ռուսաստանը վերջնական Չախլախումն յենթարկվեց 1905 թ. մայիսի 14—15-ին (հ. տ.) Յուսիմայի նեղուցի մոտ տեղի ունեցած ծովային կռվում: Պորտ-Արտուրը փրկելու համար 1904 թ. հոկտեմբերին Ռոժդեստվենսկու հրամանատարությամբ ուղարկված բալթյան եսկադրայի վրա պատերազմի կողմնակիցները դեռևս

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 204:

հույսեր եյին դնում: «Հարյուր-միլիոնավոր ռուբլիներ ծախսվեցին բալթյան եսկադրան շուտափուռ ռուսական զորքի համար,—գրում է Լենինը,—դեսից-դենից հավաքվեց անձնակազմը, հապճեպորեն ավարտվեցին ռազմական նավերի լողալու վերջին պատրաստութունները, ավելացվեց այդ նավերի թիվը՝ նոր և ուժեղ զրահանավերին միացնելով «հին սնդուկները»: Մեծ արմաղան,—հենց նույնպիսի վիթխարի, հենց նույնպիսի ծանրաշարժ, անհեթեթ, անուժ հրեշավոր, ինչպիսին ռուսական ամբողջ իմպերիան է,— ճանապարհ ընկավ, շուտով փող ծախսելով քարածխի վրա, պահպանութան վրա, ընդհանուր ծաղր առաջացնելով Յեվրոպայում, առանձնապես ձկնորսական նավահանների վրա տարած փայլուն հաղթանակից հետո, կոպիտ կերպով փոտնահարելով չեղոքութան բոլոր սովորութուններն ու պահանջները: Ամենահամեստ հաշիվներով, այդ արմաղան նստեց մոտ 300 միլ. ռուբլի, ավելացրած ուղևորման վրա կատարված 100 միլ. ռուբլին, ընդամենը 400 միլիոն ռուբլի, վորը չպրտվեց ցարական ինքնակալութան ռազմական այդ վերջին հույսի վրա»<sup>1</sup>:

Քանի դեռ նավատորմը շարժվում էր դեպի Հեռավոր Արևելք, կարելի չէր դեռ պահպանել հայրենասիրական տրամադրությունները, վորոնք, սակայն, որ-որի վրա ընկնում էյին ցամաքի և ծովի վրա մեկը մյուսին հաջորդող պարտությունների հարվածների տակ: Այդ արմաղանի դեպի Արևելք առաջխաղացման զուգընթաց իրենք, պատերազմի կողմնակիցներն, ավելի ու ավելի էյին կասկածում յայտնական նավատորմին լուրջ դիմադրություն ցույց տալու հնարավորության վրա:

Ջախջախումը նույնիսկ ավելի հրեշավոր դուրս յեկավ, քան սպասում էյին: «Ճիշտ վայրենիների հոտի նման ռուսական նավերի արմաղան ընդհարվեց հիանալիորեն զինված և նորազույն պաշտպանութան բոլոր միջոցներով ոժտված յայտնական նավատորմին»<sup>2</sup>: Յերկորյա ճակատամարտին

«հաջորդեց պաշարված Պորտ-Արտուրին Բալթիկ ծովից ոգնութան ուղարկված ցարական նավատորմի կատարյալ ջախջախումն ու կործանումը Յուսիմայի նեղուցում: Յուսիմայի մոտ կրած պարտությունը լիակատար կատաստրոֆ էր նշանակում. ցարի ուղարկած քսան ռազմանավերից ջրասույզ արվեցին ու փոչնչացվեցին տասներեքը, դերի վերցվեցին չորսը: Յարական Ռուսաստանը վերջնականապես տանուլ տվեց պատերազմը»<sup>3</sup>: Նավերի անձնակազմից մի քանի հազար մարդ խեղդվեցին ովկիանոսի ջրերում, փոքրաթիվ մասը փրկվեց և դերի ընկավ: Եսկադրայի հրամանատար ադմիրալը—բոլորից առված Ռոժդեստովենսկին և նրա մերձավոր ոգնական Ներոզատովը դերի հանձնվեցին:

Ռուսական նավատորմի խորտակումն արագացրեց հեղափոխական պոթիկումը: Վոչ մի կասկած չկա, վոր Յուսիմայի մոտ կրած ջախջախումը հսկայական ազդեցություն ցործեց Ռուսաստանում մնացած նավատորմների մասսայի վրա, հեղափոխականացրեց նրան:

Ամբողջ ժողովրդի առաջ ավելի վառ ու ավելի սուր կերպով հարց ծառայեցավ, թե հանուն ինչի՞ յեն կատարվում այդ մեծագույն զոհողությունները, կոտորվում հարյուր-հազարավոր մարդիկ, նավատորմը, խորտակվում ռուս ժողովրդի հսկայական սեփականությունը:

«Ամեն ինչ վտար յեն յեխում ինքնակալութան դեմ,— գրում էր Լենինը,—և՛ խոչոր ու մանր բուրժուազիայի վիրավորված ազգային ինքնասիրությունը, և՛ բանակի վրդովված հպարտությունը, և՛ անիմաստ ռազմական ավանտյուրայի մեջ տանյակ ու հարյուր-հազարավոր յերիտասարդ կյանքերի կորստյան կսկիծը, և՛ պայրույթը հարյուր միլիոններով ժողովրդական դրամները կողոպտելու դեմ, և՛ Ֆինանսական անխուսափելի կրախի ու այդպիսի պատերազմի հետևանքով առաջացած տնտեսական յերկար կրիզիսի վախը, և՛ վախը ժողովրդական անհեղ հեղափոխությունից,

<sup>1</sup> Ленин, Соч., т. VII, стр. 335.

<sup>2</sup> Нույն տեղում, էջ 335—336.

<sup>3</sup> «Համկ(ը)ի պատմություն»: Համատո զասընթաց, Քողհրատ, 1938 թ., հայերեն, էջ 75:

հույսեր ելին դեռում: «Հարյուր-միլիոնավոր ուրբիներ ծախսվեցին բալթյան եսկազրան շուտափուլից ուղարկելու համար,—գրում է Լենինը,—դեսից-դենից հավաքվեց անձնակազմը, հասցեագրերն ավարտվեցին ռազմական նավերի լողալու վերջին պատրաստութունները, ավելացվեց այդ նավերի թիվը՝ նոր և ուժեղ զբազանավերին միացնելով «Հին սնդուկները»: Մեծ արմազան,—հենց նույնպիսի վիթխարի, հենց նույնպիսի ծանրաշարժ, անհեթեթ, անուժ հրեշավոր, ինչպիսին ուսսական ամբողջ իմպերիան է,— ճանապարհ ընկավ, շոայրեն փող ծախսելով քարածիր վրա, պահպանության վրա, ընդհանուր ծաղր առաջացնելով Յեվրոպայում, առանձնապես ձկնորսական նավակների վրա տարած փայլուն հաղթանակից հետո, կուպիտ կերպով փոտնահարելով չեզոքության բոլոր սովորութուններն ու պահանջները: Ամենահամեստ հաշիվներով, այդ արմազանն ստեղծ մոտ 300 միլ. ուրբի, ավելացրած ուղևորման վրա կատարված 100 միլ. ուրբին, ընդամենը 400 միլիոն ռուբլի, վորը չարտվեց ցարական ինքնակալության ռազմական այդ վերջին հույսի վրա»<sup>1</sup>:

Բանի դեռ նավատորմը շարժվում էր դեպի Հեռավոր Արևելք, կարելի չէր դեռ պահպանել հայրենասիրական տրամադրությունները, վորոնք, սակայն, որ-որի վրա ընկնում էին ցամաքի և ծովի վրա մեկը մյուսին հաջորդող պարտությունների հարվածների տակ: Այդ արմազայի դեպի Արևելք առաջխաղացման զուգընթաց իրենք, պատերազմի կողմնակիցներն, ավելի ու ավելի էին կասկածում յապոնական նավատորմին լուրջ դիմադրություն ցույց տալու հնարավորության վրա:

Ջախջախումը նույնիսկ ավելի հրեշավոր դուրս յեկավ, քան սպասում էին: «Ճիշտ վայրենիներ չհորի նման ուսական նավերի արմազան ընդհարվեց հիանալիորեն զինված և նորազույն պաշտպանության բոլոր միջոցներով ուժոված յապոնական նավատորմին»<sup>2</sup>: Յերկորյա ճակատամարտին

«Հաջորդեց պաշարված Պորտ-Արտուրին Բալթիկ ծովից ոգնության ուղարկված ցարական նավատորմի կատարյալ ջախջախումն ու կործանումը Յուսիմայի նեղուցում: Յուսիմայի մոտ կրած պարտությունը լիակատար կատաստրոֆ էր նշանակում. ցարի ուղարկած քսան ռազմանավերից ջրասույզ արվեցին ու փոչնչացվեցին տասներեքը, գերի վերցվեցին չորսը: Ցարական Ռուսաստանը վերջնականապես տանուլ տվեց պատերազմը»<sup>1</sup>: Նավերի անձնակազմից մի քանի հազար մարդ խեղդվեցին ովկիանոսի ջրերում, փոքրաթիվ մասը փրկվեց և գերի ընկավ: Եսկազրայի հրամանատար ադմիրալը—բոլորից ատված Ռոժդեստովենսկին և նրա մերձավոր ոգնական Ներոգատովը գերի հանձնվեցին:

Ռուսական նավատորմի խորտակումն արագացրեց հեղափոխական պոթիվումը: Վոչ մի կասկած չկա, վոր Յուսիմայի մոտ կրած ջախջախումը հսկայական ազդեցություն դրածեց Ռուսաստանում մնացած նավատիկների մասսայի վրա, հեղափոխականացրեց նրան:

Ամբողջ ժողովրդի առաջ ավելի վառ ու ավելի սուր կերպով հարց ծառայեց, թե հանուն ինչի՞ յեն կատարվում այդ մեծագույն զոհողությունները, կտորվում հարյուր-հազարավոր մարդիկ, նավատորմը, խորտակվում ուս ժողովրդի հսկայական սեփականությունը:

«Ամեն ինչ վտռելի յեն յեյնում ինքնակալության դեմ,— գրում էր Լենինը,—և՛ խոչոր ու մանր բուրժուազիայի վերավորված ազգային ինքնասիրությունը, և՛ բանակի վերջովված հպարտությունը, և՛ անիմաստ ռազմական ավանտյուրայի մեջ տանյակ ու հարյուր-հազարավոր յերիտասարդ կյանքերի կորստյան կսկիծը, և՛ գայրույթը հարյուր միլիոններով ժողովրդական դրամները կողոպտելու դեմ, և՛ Ֆինանսական անխուսափելի կրախի ու այդպիսի պատերազմի հետևանքով առաջացած տնտեսական յերկար կրիպիսի վայսը, և՛ վայսը ժողովրդական անհեղ հեղափոխությունից,

<sup>1</sup> Ленин, Соч., т. VII, стр. 335.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 335—336:

<sup>1</sup> «Համկ(բ)ի պատմություն»: Համառոտ դասընթաց, Գողհրատ, 1938 թ., հայերեն, էջ 75:

վորից (բուրժուազիայի կարծիքով) ցարը կարող էր և պետք է խուսափեր իր ժամանակին կատարած «խոհեմ» դիվուսմենտի միջոցով<sup>1</sup>:

Յարական կառավարութիւնն սկսեց առանձնապէս շտապել հաշտութիւն կնքելու Յապոնիայի հետ: Հաշտութեան բանակցութիւնները տեղի էին ունենում Միացյալ Նահանգներում, Պորտսմութ քաղաքում: Ռուսաստանի դելեգացիան զլխավորում էր Ֆինանսների նախկին մինիստր Վիտտեն, վորին ցարն ստիպված էր հրավիրել, քանի վոր յերկու դիվանագետներ, վորոնց ցարը դիմեց՝ առաջարկելով զլխավորել դելեգացիան և ուղևորվել, բոլորովին հրաժարվեցին:

Հաշտութեան բանակցութիւններն սկսվել էին դեռ 1905 թ. հուլիսին և ավարտվեցին ոգոստոսի 23-ին (սեպտեմբերի 5-ին): Չնայած ամերիկյան կառավարութեան և պրեզիդենտ Ռուզվելտի ցույց տված ոգնութեանը, բանակցութիւնները չստիպանց դանդաղ էին ընթանում և հաշտութեան ստորագրման նախորդակին ցարական կառավարութիւնը դեռևս վստահ չէր բանակցութիւնների բարեհաջող յեղքի վրա: Առանց Ամերիկայի և Անգլիայի ազդեցութեան չէր, վոր Յապոնիան հարկադրված յեղավ վերանայել իր պահանջների մի շարք կետերը, և հաշտութիւնը կնքվեց:

Ըստ այդ պայմանագրի Ռուսաստանը Յապոնիային տվեց Սախալինի հարավային կեսը (50-րդ զուգահեռականից դեպի հարավ), Լյաոդունի թերակղզին Պորտ-Արտուր բերդով, Դալնի քաղաքով, Հարավ-մանջուրական յերկաթուղով, բոլոր կառուցումներով և կոնցեսիայի իրավունքներով:

Ռուսաստանն ընդունեց Յապոնիայի գործողութիւնների ազատութիւնը Կորեայում, վոր հավասար էր լիակատար պրոտեկտորատի:

Յարական կառավարութիւնը պարտավորվում էր մաք-

րել իր գործերից ամբողջ Մանջուրիան և հրաժարվեց այնտեղ հողային կալվածքներ ու կոնցեսիաներ ձեռք բերելուց, վորոնք կշռափեյին Չինաստանի սուվերենիտետը: Ռուսաստանը պարտավորվում էր Չին-Արևելյան յերկաթուղի՞ը ոգտագործել միայն տնտեսական նկատառումներով, և վոչ թէ ստրատեգիական: Ի լրացումն այդ պայմանագրի առանձին համաձայնութիւն ստորագրվեց ձկնորսութեան մասին, վորի գործադրման ժամկետը ներկայումս արդեն վերջացել է:

Հաշտութիւն կնքելու—թեև ցարական կառավարութեան համար ամենևին էլ վոչ բարենպաստ հաշտութիւն,— և ոտարեկրյա փոխառութիւնների շնորհիվ ինքնակալութեան միջազգային դրութիւնը իրոք լավացավ: Յապոնիայի հետ ցարի կնքած հաշտութիւնը հանդիսացավ ռուսական առաջին հեղափոխութեան պարտութեան պատճառներից մեկը: «Ցարին լուրջ կերպով ոգնեց 1905 թվականի սեպտեմբերին Յապոնիայի հետ կնքված հաշտութիւնը,—ասված է «Համկ(ը)կ պատմութեան» մեջ,—պատերազմում կրած պարտութիւնը և հեղափոխութեան անհղ աճումը ցարին ստիպեցին շտապել հաշտութիւն ստորագրելու: Պատերազմում կրած պարտութիւնը թուլացրել էր ցարիզմին: Հաշտութիւն կնքելն ամրապնդեց ցարի դրութիւնը<sup>1</sup>:

Հեղափոխական շարժման հուժկու ալիքի մեջ, վոր բարձրացավ 1905 թ. ամբողջ Ռուսաստանում, ռուսյապոնական պատերազմը, կրկնում ենք, անկասկած, խոշորագույն հեղափոխականացնող դեր խաղաց: Հաշտութեան կնքումը չէր կարող, սակայն, կասեցնել հեղափոխութեան հետագա աճումը յերկրում:

1905 թ. սեպտեմբերին գործադուլի ժամանակ Մոսկվայում տեղի ունեցավ բանվորների արյունալի ընդհարումը ժանդարմների, կազակների և ցարական կառավարութեան ուրիշ գործերի հետ: Այդ իրադարձութիւնները դնահատելով, Լենինը վերստին անդրադառնում է ռուսյապոնական

<sup>1</sup> Ленин, Соч. т. VII, стр. 336.

<sup>1</sup> «Համկ(ը)կ պատմութիւն»: Համառոտ դատընթաց, Քաղհատ, 1938 թ., էջ 82:

պատերազմի նշանակութեան հարցին և մատնանշում, վոր սեպտեմբերյան զինված ընդհարումը Մոսկվայում «պայքարի սկզբնական աստիճաններից մեկն է միայն»:

«Խայտառակ ու կործանարար պատերազմի բոլոր հետևանքներն ամենևին, ամենևին դեռևս չեն անդրադարձել ժողովրդի վրա: Տնտեսական կրիզիսը քաղաքներում, սովը գյուղերում սարսափելի կերպով սաստկացնում են զայրույթը: Մանջուրական բանակը, դատելով ըստ բոլոր տեղեկութիւնների, չափազանց հեղափոխականորեն է տրամադրված և կառավարութիւնը վախենում է նրան վերադարձնելուց, — իսկ այդ բանակը չվերադարձնել չի կարելի, նոր, ե՛լ ավելի լուրջ ապստամբութիւնների սպառնալիքից դրդված... Ապստամբութիւնը սարսափելի աճել է մեր աչքի առաջ ինչ-վոր մի տաս ամսվա ընթացքում, և յերևակայութիւն, բարի ցանկութիւն չէ, այլ մասսայական պայքարի փաստերից բղխող անմիջական ու պարտադիր յեզրակացութիւն է, այն յեզրակացութիւնը, թէ շուտով ապստամբութիւնը կբարձրանա նոր, ավելի բարձր աստիճանի, յերբ ամբոխին ողնելու դուրս կգան հեղափոխականների մարտական ջոկատները կամ զորքի խուլահույզ մասերը, յերբ նրանք կողնեն մասսաներին զենք ճարելու, յերբ նրանք ամենաուժեղ տատանումը կմտցնեն «ցարական» (դեռևս ցարական, բայց արդեն վոչ-բոլորովին ցարական) զորքի շարքերը, յերբ ապստամբութիւնը կհասցնի լուրջ հաղթութեան, վորից անզոր կլինի ուշքի դալու ցարիզմը»<sup>1</sup>:

Մասաներին զինված ապստամբութեան նախապատրաստելով, Լենինը մատնանշում էր ուսույնական պատերազմի վորձի ողտադորձման անհրաժեշտութիւնը պայթուցիկ նյութեր գործադրելու տեսակետից ցարիզմի դեմ ապստամբելու ժամանակ, հասկապես ձեռքի ումբերի ողտադորձման համար:

Լենինը հսկայական նշանակութիւն էր տալիս Հեռավոր Արևելքում դանվող բանակի հեղափոխական տրամադրու-

<sup>1</sup> Ленин, Соч. т. VIII, стр. 281.

թիւնը: Մենք արդեն տեսանք, վոր կուսակցական կոմիտեները զինվորների մեջ ագիտացիոն խոշոր աշխատանք էյին կատարում: Մի շարք նշաններ վկայում էյին գործող բանակի հեղափոխական տրամադրութեան հասունացման մասին:

Այնպիսի հեղինակավոր վկա, վորպիսին բանակի գլխավոր հրամանատար գեներալ Լինեվիչն է, անգամ նա ստիպված էր ընդունել, վոր հասկապես հաշտութիւնը կնքելուց հետո բանակի մեջ աճում են հեղափոխական տրամադրութիւնները: Այդ տրամադրութիւններն անանձնապես ուժեղանում են պահեստայինների մեջ, վորոնք «սկսում են տրոնջալ, թեև խուլ կերպով, բայց և այնպես խոսում են»:

Յարը դտավ, վոր Լինեվիչը չափազանց մեղմ է պայքարում խուլութեան դեմ, ուստի և նրան վոչ միայն հանցին, այլև դատի տվին: Զորացրվող զինվորների մեջ «կարգ» ստեղծելու համար ուղարկվեց գեներալ Գրոդեկովը: Լենինը մի ժամանակ գտնում էր, վոր թեքուս ավելի ողտակար կլիներ զինված ապստամբութեան սկիզբը հետաձգել մինչև 1906 թ. դարուն, յերբ զայրացած և հեղափոխականացած, Հեռավոր Արևելքում զորացրված զորքերը կվերադառնան Ռուսաստան: Դրանից, սակայն, չի կարելի յեզրակացնել, թէ 1905 թ. դեկտեմբերյան զինված ապստամբութիւնը Լենինը համարում էր վաղաժամ: Լենինը գտնում էր, վոր ապստամբութիւնն անխուսափելի յէ, վոր մասսաներն այլևս չեն կարող սպասել: Յերբ ապստամբութիւնն սկսվեց, Լենինն ու Ստալինը գտնվում էյին կուսակցական կոնֆերենցիայում՝ Տամբերֆորսում: Մեր կուսակցութեան առաջնորդները վոչ միայն վորեւէ փորձ չարին ապստամբութիւնը հետաձգելու, այլև, ընդհակառակը, նրանք իրենց պարտքն էյին համարում ամբողջ ուժերը տալ սկսված ապստամբութիւնը համառուսաստանյան զինված հաղթական ապստամբութեան վերածելու համար:

Ապստամբութիւնը պարտութեամբ վերջացավ մասամբ նաև այն պատճառով, վոր ցարիզմին հաջողվեց փոխառութիւն ստանալ և հաշտութիւն կնքել յապոնական իմպերիալիզմի հետ: Միջազգային բուրժուազիան ողնութեան յե-

կալ ցարիզմին հեղափոխութեան դեմ պայքարելու գործում:

Յարիզմի սրարտութիւնը ուսու-յապոնական պատերազմում և այդ պատերազմի դասերը շարունակուած ելին իրենց զգալ տալ մասսաների տրամադրութեան մեջ: Հեռավոր Արևելքից վերադարձող զինվորները, հաշմանդամները սաստիկ ատելութիւնն ելին բերում քաղաքներն ու գյուղերը՝ ցարիզմին և բուրժուազիային—ժողովրդի թշվառութիւնների ու տանջանքների հանցավորներին:

Ստոլիպինի դեկլարացիայի առթիւ կոչի նախագծում 1907 թ. հուլիսին Լենինը գրում էր. «Զինվորներն ու նա-վաստիները, վորոնք արյուն թափեցին ի հողուտ մի խումբ պալատականների դիշատիչ շահերի Յապոնիայի դեմ կառա-վարութեան ձեռնարկած պատերազմում, —հայրենիքում ար-յուն թափեցին, պայքարելով, իրենց կյանքը թեթեացնելու, կազարմային տաժանակրութիւնից ազատելու համար, նրա համար, վորպեսզի զինվորն էլ վերջապես կարողանա իրեն մարդ զգալ, և վոչ թե անասուն, —զինվորներն ու նա-վաստիները կառավարութիւնից վոչինչ չպիտի սպասեն, բացի նախկին բնութիւններից և ճնշումներից, բացի նույն դաժան վերաբերմունքից և չոր հացի կտորից ի վարձա-տրութիւնն իրենց յեղբայրներին—բանվորներին ու գյուղա-ցիներին խաղաղացնելու և հնազանդեցնելու, վորոնք ձգտում են ազատութեան, ձգտում են հող ձեռք բերել գյուղացիու-թեան համար»<sup>1</sup>:

Յերկու հեղափոխութիւնների միջև ընկած ժամանակա-շրջանում Լենինն իր գործունեութեան ընթացքում մեկից ամբիւր անգամ հաշիւ յեր առնում ուսու-յապոնական պատե-րազմի դասերը: Ետուտգարտի միջազգային սոցիալիստական կոնգրեսի ժամանակ (1907 թ. հոկտեմբեր) հակամիլիտա-րիզմի հարցը քննելիս Լենինը Ռոզա Լուքսեմբուրգի և ու-սական սոցիալ-դեմոկրատիայի ամբողջ ղեկեղացիայի հետ միասին ուղղումներ մտցրեց Բեբելի բանաձևին. «Այդ ուղ-ղումներում 1) ասված էր, վոր միլիտարիզմը դասակարգա-

յին ճնշման դիտարկող ղեկն է, 2) մատնանշվում էր յերի-տասարդութեան մեջ ազիտացիա մղելու խնդիրը, 3) ընդ-դիմում էր սոցիալ-դեմ. խնդիրը՝ պայքարելու վոչ միայն պատերազմների առաջացման դեմ կամ արդեն սկսված պա-տերազմները շուտափուլ լեքայով դադարեցնելու համար, այլ նաև հանուն այն բանի, վորպեսզի պատերազմի ստեղ-ծած կրիզիսն ողտազործվի բուրժուազիայի անկումն արա-զացնելու համար»<sup>1</sup>:

Այդ նույն կոնգրեսում, պաշտպանողական և հարձա-կողական պատերազմի հարցը քննելիս, Լենինը նշեց, վոր այդ հարցը, ինչպես նաև «պատրիոտիզմի» նկատմամբ հա-յացքը հարկավոր է վճուել պրոլետարիատի դասակարգային պայքարի շահերի տեսակետից, պրոլետարիատի միջազգա-յին շարժման և սոցիալիզմի համար պայքարելու շահերի տեսակետից. այն, ինչ պրոլետարիատի հաղթանակի ոգտին է, այն էլ կլինի ճիշտ վերաբերմունքը դեպի պատերազմը:

\* \* \*

Ռուս-յապոնական պատերազմի սկզբից անցել է 35 տա-րի, այդ ժամանակամիջոցում տեղի ունեցան մեծագույն իրադարձութիւններ, վորոնք արմատապես փոխեցին իրերի դրութիւնը Հեռավոր Արևելքում:

Սկսած 1917 թ. Հոկտեմբերյան Սոցիալիստական հեղա-փոխութեան ժամանակից, մեր յերկիրը դադարեց լինել ուրիշների հողերը զավթելու հալախութիւն ունեցող յեր-կիր: Մենք ուրիշի հողը չենք ուզում, բայց և մեր հողից էլ, —վոչ մի վերջիկ մեր հողից վոչ վոքի չենք տա, վորով-հետև դա խորհրդային հող է, մի հող, վոր նվաճված է բանվորների ու գյուղացիների միլիոնավոր մասսաների արյունով ու քրտինքով: Մեր յերկիրը խաղաղութեան պատ-վարն է հանդիսանում:

Բայց չի փոխվել յապոնական իմպերիալիզմի բնույթը: Նա էլ ամբիւր շատ է լիտիացել և աճել: Նրա ազրեստիան

<sup>1</sup> Նույն տեղում, հ. XXX, էջ 183:

Նույն տեղում, հ. XII, էջ 82:

ալելի շատ և ուժեղացել, քան եր 35 տարի սրանից առաջ: Յապոնական իմպերիալիզմը իմպերիալիստական նոր պատե-  
րագմի ուղխն է Արևելքում: Յապոնական գինվորականու-  
թյունը քիչ փորձեր չի արել Յապոնիային Խորհրդային  
Միության դեմ պատերազմի մեջ քաշելու համար:

Քաղաքացիական պատերազմի տարիներին յապոնական  
իմպերիալիզմը զավթեց Պրիմորյեն և այնտեղ իրեն պահում  
եր վորպես լիտի նվաճող: Յապոնական իմպերիալիստները,  
վորոնք շոգեկառքերի կաթսաներում կենդանի այրում էյին  
բուլճեիկներին (Սերգեյ Լազոյին և ուրիշ.), Հեռավոր Արևել-  
քի աշխատավորների մեջ ամենասաստիկ ատելություն են  
թողել իրենց հանդեպ: Հեռավոր Արևելքի աշխատավորները,  
պարտկաններն ու կարմիր-բանակայինները դաս տվին  
յապոնական զավթողներին և դուրս փոնդեցին նրանց  
խորհրդային հողից:

Մական 1938 թ. աչնանը յապոնական իմպերիալիստնե-  
րը նորից փորձ արին հարձակվելու Խորհրդային Միության  
վրա: Այն ջախջախիչ հակահարվածը, վոր յապոնական սա-  
մուրայներն ստացան Խասան լճի մոտ, ցույց տվեց ամբողջ  
աշխարհին, վոր նրանց հարձակումը բանվորների և գյու-  
ղացիների պետության վրա չի կարող անպատիժ անցնել:  
Խորհրդային Միության կարմիր Բանակը կրկնապատիկ ու  
յեռապատիկ հարվածով կտրատախանի յապոնական ռազմա-  
մոչներին՝ խորհրդային հողն անցնելու յուրաքանչյուր փոր-  
ձին:

Խորհրդային կառավարության վարած խաղաղության  
անչեղ քաղաքականությունը ջլատել է Խորհրդային Միու-  
թյանը պատերազմի մեջ ներգրավելու ամեն մի փորձ: Յա-  
պոնական իմպերիալիզմն ամենայն արագությամբ անդունդի  
յեղրը կհասնի, յեթե նա մտադրվի առաջիկայում էլ Խոր-  
հրդային Միության վերաբերմամբ իր քաղաքականության  
մեջ ղեկավարվել ուսու-յապոնական պատերազմի հիշողու-  
թյուններով:

Ռուս-յապոնական պատերազմում իմպերիալիստական

Յապոնիան իր հանդեպ ունեւր ցարական ինքնակալության  
ամբողջապես նեխած սխտեմը:

Խորհրդային Միությունն անխորտակելի ժայռ է, առաջ-  
նակարդ ռազմական ուժ ցամաքի վրա, ծովի վրա, ոգի մեջ  
և ջրի տակ: Կարմիր Բանակը և Ռազմա-Մովային կարմիր  
Նավատորմը, պաշտպանելով սոցիալիստական հայրենիքը,  
պատրաստ են հակահարված տալու յուրաքանչյուր ագրես-  
սորի, այդ թվում նաև յապոնական իմպերիալիստներին:  
Թող յապոնական իմպերիալիստները չմոռանան, վոր իրենց  
գլխաց նրանք ունեն միանգամայն այլ ուժ. սոցիալիստական  
հասարակության քաղաքականապես գիտակից աշխատավոր-  
ներին, իրենց հայրենիքի բոցավառ հայրենասերներին, վո-  
րոնք գինված են ռազմական առաջնակարգ տեխնիկայով:  
Թող չմոռանան, վոր յեթե 35 տարի սրանից առաջ Ման-  
ջուրիայի դաշտերում կուլում էյին կարվածատերերի ու կա-  
պիտալիստների կողմից խարված ուսւ գյուղացիներն ու  
բանվորները, ապա հանձին խորհրդային բանվորի, խորհրդ-  
ային գյուղացիության, խորհրդային ինտելիգենտի, վո-  
րոնք ուրախությամբ գնում են կարմիր Բանակի և կարմիր  
Նավատորմի շարքերը, նրանք իրենց հանդեպ ունեն սոցիա-  
լիստական հասարակության ազատ աշխատավորներին, վո-  
րոնց պատկանում է ամբողջ հողը, բոլոր Փարբիկաներն ու  
գործարանները, ամբողջ իշխանությունը յերկրում,—վորոնք  
պատրաստ են պաշտպանելու իրենց հայրենիքը՝ Խորհրդային  
Միությունը: Նրանք պաշտպանելու բան ունեն, նրանք  
պաշտպանելու միջոցներ ունեն, նրանք գիտեն, թե ինչի հա-  
մար են պայքարում:

Յապոնական իմպերիալիստները պետք է իմանան, վոր  
կարմիր Բանակի ժամանակակից տեխնիկայի և ուժի ժամա-  
նակ Խորհրդային Միությունից մինչև Յապոնիա տարածու-  
թյունն ամենեին ավելի յերկար չէ, քան Յապոնիայից մին-  
չև Խորհրդային Միություն: 1938 թ. նոյեմբերի 7-ին կար-  
միր Բանակի գորահանդեսում ընկ. Վորոշիլովի արտասա-  
նած ճառը պետք է ասեղ նախազգուշացում ծառայի նրանց  
համար:

«Խասան լճի մոտ տեղի ունեցած իրադարձութիւնները, —ասաց ընկ. Վորոշիբովը, — չէ՞ վոր պատերազմ չեն: Դրանք պատերազմի պրոփոկացիա չեն, զինված լկտի յեւրոյթ անհանգիստ և, ինչ մեղքը թագոյնենք, անխելք հաւանի կողմից:

Այժմ յուրաքանչյուրի համար պարզ է, վոր կորեական ու կվանտունյան բանակների պարոնայք յապոնական զենեւրալները յերազում էյին «սոանց տուրուզմիոցի դառնալ մեծ կովարարներ»: Նրանք մտածում էյին հեշտությամբ, արագորեն ու եժան ստանալ խորհրդային հողի մի կտոր և ամբողջ աշխարհով մեկ ճշալ իրենց քաջութիւնների և Կարմիր Բանակի թուլության մասին:

Նրանք սատարիկ խարվեցին: Կարմիր Բանակը դաժանորեն ջախջախեց նրանց: Պետք է ասել, վոր պարոնայք յապոնական զենեւրալները, վորոնք հավանորեն արդեն յերազում էյին պարզների մասին, հասկանալի չէ, վոր չէյին ուզի ջախջախված լինել և նրանք գործադրեցին իրենց ամբողջ համառութիւնը, իրենց մեծ ու լավագույն ուժերը չարտեցին Կարմիր Բանակի գործասերի դեմ, և չնայած դրան, գլխովին ջախջախվեցին, ջարդուփշուր արվեցին:

Սակայն մենք չգիտենք, թե վորքան ուժեղ է այդ պարոնների հիշողութիւնը, վորքան լավ են նրանք յուրացնում դասերը: Բայց յեթե Խասան լճի մոտ տրված խրատիչ դասերը բավական չեն, յեթե թշնամին ի վիճակի չէ մոռանալ խորհրդային զենքի կործանիչ ուժը և կարմիր մարտիկները ու նրանց հրամանատարների հերոսութիւնը, մենք պետք է նրանց ասենք. պարոնայք, այն, ինչ դուք ստացաք Խասանի մոտ, այդ միայն «ծաղիկներն» են, իսկ «պտուղները», իսկական «պտուղները» դեռ առջևումն են: Ամեն մի անհանգիստ կամ լկտի թշնամի, միևնույն է՝ վորտեղ ու յերբ էլ նա համարձակվի իր քիթը խոթել մեր հողը, հարկ կունենա ճաշակելու այդ խորհրդային «պտուղները»: Թող հիշեն նրանք, ում հարկ չէ մոռանալ, վոր մենք բնավ էլ պարտավոր չենք միշտ մեր գորքերի գործողութիւնները սահմանափակել այն շրջանով, վորի վրա գողարար ու լկտիորեն

հարձակվում է թշնամին: Ընդհակառակը, մեզ համար ավելի հարմար ու ավելի հեշտ է թշնամուն ջախջախել նրա սեփական տերիտորիայում: Դա այդպես էլ կլինի—ամեն մի հարձակման ու հարվածի մենք կպատսխանենք մեր քաջարի Կարմիր Բանակի ամբողջ հզորության յեռակի հարվածներով»:

1938 թ. նոյեմբերի 6-ին Մոսկվայի խորհրդի հանդէսավոր նիստում այդ մասին էլ խոսեց ԽՍՀՄ Ժողովրդական Նախագահ Վ. Մոլոտովը.

«...Մեզ այժմ ստույգ կերպով հայտնի չէ, վոր Չաոզերնայա (Չանկոֆին) սարի գրավման հարցը և, նշանակում է, Խասան լճի շրջանում տեղի ունեցած իրադարձութիւնների ամբողջ հարցը վճարվել է էյապես վոչ թե Տոկիոյում, այլ ինչ-վոր մի այլ տեղ՝ Յեվրոպայում, իսկ ավելի շուտ՝ Բեռլինում: Յապոնական ռազմամոլները հավանաբար ուզում էյին պաշտպանել իրենց Փաշխտական բարեկամներին Գերմանիայում և, առանց մտածելու, ընկան իրենց ինչ-վոր մանր գործակալների թակարդը: Յեթե պարոնայք յապոնական ու գերմանական Փաշխտաներն ուզում էյին փորձել նախ՝ մեր արտաքին քաղաքականության ամբողջիւնը և յերկրորդ՝ Կարմիր Բանակի մարտական հատկութիւնները, ապա այդ յերկու հարցի առթիվ էլ նրանք պարզ ու ըմբռնելի պատասխան ստացան»:

Մենք գիտենք, վոր հենց Յապոնիայում բանվորներն ու գյուղացիները այլ կերպ են վերաբերվում Խորհրդային Միութեանը, քան վերաբերվում էյին յապոնական բանվորներն ու գյուղացիները ցարական Ռուսաստանին 1904—1905 թվերին: Բայց արդեն այն ժամանակ էլ II Ինտերնացիոնալի Շտուտգարտի Միջազգային կոնգրեսում յապոնական սոցիալիստների առաջնորդ Սեն-Կատայաման և ՌՄԴԲԿ ներկայացուցիչ Գ. Վ. Պլեխանովը հրապարակորեն սեղմեցին միմյանց ձեռքը ի նշան Յապոնիայի և Ռուսաստանի աշխատավորների համերաշխության:

Իմպերիալիստների կողմից խարված, ճնշված և թալանված յապոնական բանվորներն ու գյուղացիներն ավելի ու

ավելի յեն գիտակցութեան գալիս, վոր նրանց միակ հույսը կոմունիստական Ինտերնացիոնալն է, վորի առաջավոր ջոկատը հանդիսանում է Համամիութենական կոմունիստական (բոլշևիկներին) կուսակցութեանը, վորն իր հետեից տանում է խորհրդային ամբողջ ժողովուրդը: Յապոնիայի գիտակից բանվորներն ու գյուղացիները գիտեն, վոր Սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ-ում յերջանիկ դարձրեց Խորհրդային Միութեան ժողովուրդներին: Նրանք հավատացած են, վոր Յապոնիայի սոցիալիստական հեղափոխութեանը միայն նրանց կազատի կապիտալիստների, կալվածատերերի լծից, Ֆաշիստների լծից և յապոնական ժողովուրդին յերջանիկ կղարձնի: Այս տրամադրութեաններն արդեն այժմ սկսում են իրենց զգալ տալ Յապոնիայում պատերազմի դեմ ավելի ու ավելի հաճախ կազմակերպվող բողոքներով:

Այս մասին նույնպէս ավելորդ չե՛ր լինի հիշեցնել ռուս-յապոնական պատերազմի 35-ամյակի կապակցութեամբ:

35 տարի առաջ ռուս-յապոնական պատերազմում մենք պարտվողականներ եյինք, վորովհետև այդ պատերազմն իմպերիալիստական պատերազմ էր, անարդարացի պատերազմ: 1917 թ. նոյեմբերի 7-ից սկսած մենք դարձանք մեր սոցիալիստական հայրենիքի պաշտպանողականները, նրա բոցաշունչ հայրենասերները: Յե՛վ մենք կապալաններ մեր սոցիալիստական հայրենիքը հեղափոխական ամբողջ կրքոտութեամբ, ամենայն արիութեամբ, վոր մեր մեջ դաստիարակել են բոլշևիկներին կուսակցութեանը, մեր կուսակցութեան ստալինորդներ՝ Լենինն ու Ստալինը:

Ժողովուրդի անարդ թշնամիները—տրոցկիստները, բուխարինականները և բուրժուական նացիոնալիստները,—մատնում եյին մեր հայրենիքը, յապոնացիներին խոստանում եյին տալ Հեռավոր Արևելքը և Միջերկր: Խորհրդային արդարադատութեանը վերջ տվեց այդ նողկալի բանդայի զործունեյութեանը:

35 տարի առաջ լինելով պարտվողականներ, մենք այն ժամանակ կատարում եյինք մեր պարտքը պրոլետարական ժողովուրդի հանդեպ, հեղափոխութեան հանդեպ: Գնդակահա-

րելով նրանց, ովքեր պարտվողականներ են հանդիսանում սոցիալիստական հայրենիքի վերաբերմամբ, ովքեր աշխատում են Խորհրդային Միութեան պարտութեան համար՝ տրոցկիստներին, բուխարինականներին,—մենք նույնպէս կատարում ենք մեր պրոլետարական ինտերնացիոնալ պարտքը, վորովհետև մենք վոչնչացնում ենք կոմունիզմի թշնամիներին, մեր սոցիալիստական հայրենիքի՝ ամբողջ աշխարհի աշխատավորների և ճնշվածների հայրենիքի թընամիներին:

Վորպէս մեր սոցիալիստական մեծ յերկրի պաշտպանողականներ, մենք պատրաստ ենք գործով ցույց տալու, վոր չկա գոհողութեան, վորին չզիմեյին Խորհրդային Միութեան աշխատավորները մեր հայրենիքի ամբողջութեանը պաշտպանելու համար, և վոր չկա այնպիսի մի ուժ, վորը կարողանար կասեցնել Սոցիալիզմի Յերկրի հաղթական յերթը դեպի կոմունիզմի գործի լիակատար և վերջնական հաղթանակը:

<< Ազգային գրադարան



NL0415428



Քարգմանեց Ռ. Փարսուղյան  
Խմբագիր Ա. Հակոբյան .  
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան  
Սրբագրիչ Վ. Զիդեցյան  
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

---

Գլավիլիտի լիազոր № Կ—2465, հրատ. № 703,  
Պատվեր № 119, տիրաժ 5.000, թղթի չափսը  
(32.500 տպ. նիշ. 1 տպ. մամուլում) 4 տպ. մամուլ, 2 թերթ թուղթ.  
Հանձնված է արտագրության 16/VI 1939 թ.  
Ստորագրված է տպագրության 17/VII 1939 թ.  
Գինը 70 կ.

---

Պետհրատ—Քաղաքական գրականության հրատարակչության տպարան  
Յերևան, Ալլահվերդյան № 65